ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ
ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ
ՀՀ-ՈՒՄ ԿՈՎԻԴ-19 ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԶԵԿՈՒՅՑ

Երևան, 2021

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ԿՈՎԻԴ-19 հիվանդության համավարակի պայմաններում ազատությունից զրկելու պրակտիկայի ուսումնասիրություն և մարդու իրավունքների միջազգային չափանիշների պահպանման օժանդակություն» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսավորմամբ, թիվ G20192 դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կազմակերպության տեսակետների հետ:

Աշխատանքային խումբ.

Արաքս Մելքոնյան, Մարիամ Ղազարյան, Հասմիկ Հարությունյան, Աննա Մելիքյան, Դիանա Դանիելյան

Բովանդակություն

Ներածություն 4

Մեթոդաբանություն 5

ԿՈՎԻԴ-19 հիվանդության և անազատության մեջ գտնվող անձանց իրավունքներին առնչվող միջազգային կազմակերպությունների առաջարկությունները 7

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան 10

Ամփոփ տեղեկատվություն ուսումնասիրված դատական ակտերի վերաբերյալ 15

Խափանման միջոցը փոփոխելու մասին միջնորդությունների փաստարկները 20

Խափանման միջոցը փոփոխելու մասին միջնորդությունների վերաբերյալ մեղադրողների հակափաստարկները 23

Դատարանների եզրահանգումները և հիմնավորումները 28

Ամփոփում 47

Առաջարկություններ 49

Հավելված: Հետազոտության հարցաշար 50

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. աշխարհում տարածված նոր տիպի կորոնավիրուսային (ԿՈՎԻԴ-19)[1] հիվանդության դեմ պայքարի շրջանակներում հատուկ ուշադրության արժանացավ ազատությունից զրկված անձանց շրջանում հիվանդության տարածումը վերահսկելու և կանխարգելելու՝ պետության պարտավորությունը:

Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման պայմաններից ու ձևից ելնելով՝ ազատությունից զրկված անձինք և քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներն առավել խոցելի են հիվանդության նկատմամբ՝ հաշվի առնելով փակ տարածությունում ապրելը, անձանց սերտ շփումը խցային պայմաններում, քրեակատարողական հիմնարկներում հիգիենայի չափանիշների և սոցիալական հեռավորության պահպանման, ինչպես նաև ինքնամեկուսացման չափանիշների պահպանման անհնարինությունը: Ավելին, ազատությունից զրկված անձանց խոցելիությունը հիվանդության նկատմամբ ընդգծվում է հատկապես ազատությունից զրկված անձանց շրջանում տարածված ծանր վարակիչ և քրոնիկ հիվանդությունների, ինչպես նաև թույլ իմունային համակարգի, ցածր կալորիականության և վիտամիններով ոչ հագեցած սննդակարգի բերումով և այլն:

Քրեակատարողական հիմնարկներում նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու նպատակով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվեցին անհրաժեշտ խիստ միջոցառումների վերաբերյալ պետություններին ուղղված առաջարկություններ և հանձնարարականներ, որոնք վերաբերել են ոչ միայն քրեակատարողական հիմնարկներում և ազատությունից զրկելու այլ վայրերում գտնվող անձանց առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, այլև գերբնակեցման խնդրի լուծմանը՝ ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցների կիրառմանը:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել կորոնավիրուսային հիվանդության համավարակի պայմաններում ներպետական դատարանների կողմից խափանման միջոցների կիրառման պրակտիկան, կալանավորման կիրառման հիմքերն ու հիմնավորումները, համավարակի և դրա առաջացրած ռիսկերի գնահատումը և դերը անձանց նկատմամբ կիրառված խափանման միջոցի որոշման հարցում:

Միաժամանակ, ելնելով մինչդատական վարույթի ընթացքում նախաքննական գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներից և մեղադրյալի կալանավորման առնչությամբ կայացված որոշումների ոչ հրապարակային բնույթից՝ ուսումնասիրության են ենթարկվել 2020թ. մարտի 16-ից մինչև հունիսի 30-ը Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության

[1] Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդությունը հանդիսանում է շնչառական վարակ, արտահայտվելով հիմնականում թոքաբորբով: Վարակված անձանց մեծ մասի մոտ հիվանդության ախտանիշները արտահայտվում են մեղմ կամ չափավոր՝ առանց բարդությունների, սակայն խոցելի խումբանձանց՝ 60 և ավելի տարեկան կամ քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց մոտ հիվանդությունը կարող է դրսևորվել ծանր՝ նույնիսկ հանգեցնելով մահվան:

դատարանների կողմից քրեական գործերի դատական քննության ընթացքում կալանավորումը այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունների քննության վերաբերյալ կայացված հանրորեն հասանելի որոշումները:

Մեթոդաբանություն

Սույն զեկույցով ամփոփվում է Հայաստանի Հանրապետությունում նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության տարածմամբ պայմանավորված խափանման միջոցների կիրառման դատական պրակտիկան: Հաշվի առնելով քրեական գործերի մինչդատական վարույթի շրջանակներում մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունների քննության և այդ որոշումների ոչ հրապարակային բնույթը՝ ուսումնասիրության են ենթարկվել 2020թ. մարտի 16-ից[2] մինչև հունիսի 30-ը ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից քրեական գործի դատական քննության ընթացքում կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու կամ վերացնելու վերաբերյալ միջնորդությունների վերաբերյալ կայացված դատական ակտերը, որոնք հասանելի են եղել դատական տեղեկատվական համակարգում:

Դատական ակտերը դուրս են բերվել դատական տեղեկատվական համակարգի datalex.am կայքից և վերաբերում են 2018-2020թ. ընթացքում դատարանի կողմից վարույթ ընդունված քրեական գործերով ամբաստանյալների նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի քննարկմանը: Միաժամանակ, ուսումնասիրվել են ՀՀ դատական դեպարտամենտի կողմից կազմակերպության հարցմանն ի պատասխան տրամադրված տեղեկատվության շրջանակներում ներառված քրեական գործերով ամբաստանյալների նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ որոշումներ: Սրանք ներառել են այն գործերը, որոնք դատարանների վարույթ են ընդունվել մինչև 2018 թվականը:

Տեղեկատվական հարցումներ են ուղարկվել նաև ՀՀ գլխավոր դատախազություն կալանավորումից ազատելու առնչությամբ մեղադրող դատախազների կողմից ներկայացված միջնորդությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Տվյալները համեմատվել են ուսումնասիրությամբ դուրս բերված գործերով առկա տեղեկությունների հետ:

Ընդհանուր առմամբ դուրս են բերվել 2020թ. մարտի 16-ից հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում ամբաստանյալի նկատմամբ կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու հարցի վերաբերյալ որոշում պարունակող 129 գործ 149 անձի վերաբերյալ, որոնք ուսումնասիրվել են ծրագրի շրջանակներում:

[2] 2020թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունում հայտարարվել արտակարգ դրություն, https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/

Դուրս բերված դատական ակտերի ուսումնասիրությունն իրականացվել է հատուկ մշակված հարցաշարի հիման վրա՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպերով ձևավորած չափանիշները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների առաջարկությունները կորոնավիրուսային հիվանդության ռիսկային գործոնների վերաբերյալ:

ԿՈՎԻԴ-19 ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ և ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար

2020թ. ապրիլի 6-ին Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը կոչ է արել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին կիրառել ազատությունից զրկելու այլընտրանքային միջոցներ, այդ թվում՝ դատապարտյալների վաղաժամկետ ազատումը, քրեական արդարադատության քաղաքականության բարեփոխումներ քրեակատարողական հիմնարկների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար, այդ թվում՝ ժամանակավոր կամ վաղաժամ ազատում, համաներումներ, տնային կալանք կամ պատիժների մեղմացում, քրեական վարույթի կասեցում կամ պատիժների կատարման հետաձգում: ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարը կոչ է արել պետություններին հատուկ ուշադրության արժանացնել ուղեկցող հիվանդություններ ունեցող անձանց, հասարակության համար վտանգ չներկայացնող տարեց անձանց նկատմամբ, ինչպես նաև նրանց, ովքեր մեղադրվում կամ դատապարտված են ոչ մեծ ծանրության կամ ոչ բռնի հանցագործությունների համար: Ավելին, ավելի հրամայական է, որ իրավապաշտպանները, ակտիվիստները կամ լրագրողները, ովքեր որոշ անդամ պետություններում կալանավորված են ի խախտումն մարդու իրավունքների չափանիշների, անհապաղ և առանց նախապայմանների ազատ արձակվեն:[3]

Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտե

ԵԽ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն մշակել էր ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները՝ ԿՈՎԻԴ-19 համավարակի համատեքստում: Կոմիտեն արձանագրել է, որ կորոնավիրուսի համավարակն արտակարգ մարտահրավեր է առաջացրել ԵԽ անդամ պետությունների համար: Այդ մարտահրավերները ունեն հատուկ և ինտենսիվ ազդեցություն ազատազրկման տարբեր վայրերում, այդ թվում՝ քրեակատարողական հաստատություններում, պահվող անձանց, ինչպես նաև հիմնարկի աշխատակազմի համար: Ի թիվս այլ սկզբունքների, ԽԿԿ-ն կոչ է արել համապատասխան բոլոր մարմիններին գործադրել հատուկ ջանքեր կիրառելու ազատազրկման այլընտրանքային միջոցներ: Նման մոտեցման անհրաժեշտությունը առաջնային է հատկապես ազատազրկման վայրերի գերբնակեցման պայմաններում: Դրանից բացի՝ իշխանությունները պետք է ավելի շատ կիրառեն կալանավորման այլընտրանքային

[3] Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.coe.int/en/web/commissioner/-/covid-19-pandemic-urgent-steps-are-needed-to-protect-the-rights-of-prisoners-in-europe

միջոցները, պատժի մեղմացման միջոցները, ինչպես նաև պատժից վաղաժամկետ ազատում և պրոբացիա[4]:

Համաշխարհային առողջապահական կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ

Համաշխարհային առողջապահական կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի կողմից պետությունների համար մշակվել է բանտերում և ազատազրկման այլ վայրերում կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի ուղեցույց: Կազմակերպության կողմից վերստին արձանագրվել է, որ համավարակի ընթացքում ազատությունից զրկված անձինք հատկապես խոցելի են, և պետության պարտավորությունն է ազատությունից զրկված անձանց համար ապահովել պատշաճ բուժօգնություն առանց որևէ խտրականության: Գրասենյակի կողմից նշվել է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել քրեական արդարադատության բոլոր փուլերում ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառմանը: Առավելություն պետք է տրվի ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներին ոչ մեծ ռիսկ ունեցող և պարտավորություններ կրող կալանավորված անձանց և դատապարտյալների համար՝ նախապատվությունը տալով հղի կանանց և խնամքին երեխա ունեցող կանանց[5]:

ՄԱԿ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար

ՄԱԿ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը 2020թ. մարտի 25-ին պետությունների իշխանություններին կոչ է արել արագորեն գործել ազատությունից զրկված անձանց թիվը նվազեցնելու ուղղությամբ: Իշխանությունները պետք է ուսումնասիրեն միջոցները՝ ազատելու կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ առավել խոցելի անձանց, այդ թվում՝ ծեր և առողջական խնդիրներ ունեցող դատապարտյալներին, ինչպես նաև ոչ մեծ ռիսկայնություն ունեցող իրավախախտներին/հանցագործներին: Անհրաժեշտ է շարունակել երաշխավորել հատուկ առողջապահական պահանջները կին դատապարտյալների համար, ներառյալ՝ հղի կանանց, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող և անչափահաս դատապարտյալների (ազատությունից զրկված անձանց) համար[6]:

ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC), Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO), ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի

---

[4] Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/16809cfa4b

[5] Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.euro.who.int/__data/assets/pdf_file/0019/434026/Preparedness-prevention-and-control-of-COVID-19-in-prisons.pdf

[6] Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=25745&LangID=E

հարցերի համատեղ ծրագ (UNAIDS), ՄԱԿ-ի Մարդու իրավունքներին գերագույն հանձնակատարի (UN OHCHR) համատեղ հայտարարությունը

ՄԱԿ մարմինները համատեղ հայտարարությամբ արձանագրում են, որ քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունը ազդում է հիգիենայի, առողջության, մարդու արժանապատվության և անվտանգության վրա, հետևաբար, փակ հաստատություններում կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ միայն առողջապահական միջոցառումների ձեռնարկումը բավարար չէ: Գերբեռնվածությունը անհաղթահարելի խոչընդոտ է կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, նախապատրաստման կամ բուժման համար: ՄԱԿ մարմինները կոչ են արել պետությունների իշխանություններին սահմանափակել ազատազրկման կիրառումը, այդ թվում՝ նախնական կալանքը, և ջանքերն ուղղել ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառմանը: Այս ջանքերը պետք է ընդգրկեն անձին ազատ արձակման մեխանիզմների կիրառումը, հատկապես կորոնավիրուսային հիվանդությանը խոցելի անձանց համար, ինչպիսիք են տարեց և առողջական խնդիրներ ունեցող անձինք, ինչպես նաև այն անձինք, ովքեր կարող են ազատ արձակվել առանց խաթարելու հասարակական անվտանգությունը, ինչպիսիք են ոչ մեծ ծանրության, ոչ բռնի հանցագործության համար ազատությունից զրկված անձինք՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և անչափահասներին[7]:

[7] Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.who.int/news/item/13-05-2020-unodc-who-unaids-and-ohchr-joint-statement-on-covid-19-in-prisons-and-other-closed-settings

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է, որ

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հիմնական նպատակն է պաշտպանել անձին կամայական կամ չհիմնավորված ազատազրկումից[8]: Իշխանության կամայականությունից պաշտպանության ապահովման համար Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն սպառիչ դեպքերը, որոնց պայմաններում անձն իրավաչափորեն կարող է զրկվել ազատությունից, և որոնք պետք է խիստ սահմանափակ մեկնաբանության ենթարկվեն, քանի որ հանդիսանում են անձի ազատության ամենահիմնական երաշխիքներից բացառություններ[9]:

Անձին ազատությունից զրկելու ցանկացած դեպք պետք է լինի օրինական՝ ինչպես ներպետական օրենսդրության նյութական և ընթացակարգային նորմերին համապատասխանելու

---

[8] ՄԻԵԴ, *Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի (Lukanov v. Bulgaria)*, no. 21915/93, 20 մարտի 1997, §41, *Reports* 1997-II; ՄԻԵԴ, *Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի* (Assanidze v. Georgia) [GC], no. 71503/01, 08 մարտի 2004, §171, ECHR 2004-II:

[9] ՄԻԵԴ, *Քուինն ընդդեմ Ֆրանսիայի (Quinn v. France)*, no. 18580/91, 22 մարտի 1995, § 42:

առումով՝ առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով[10], այնպես էլ Կոնվենցիոն երաշխիքների պահպանման տեսանկյունից[11]: Միաժամանակ, ազատությունից զրկելու ցանկացած դեպք պետք է ենթարկվի անհապաղ և արագ դատական վերահսկողության[12]:

Անձի կողմից հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածի առկայությունը և դրա պահպանությունը առաջնային պայման է անձի ազատազրկման օրինականության համար: Միաժամանակ, դատարանը պետք է հաստատի կալանավորման հիմքերի առկայությունը, ինչը կարդարացնի անձին ազատությունից զրկելը: Այն դեպքերում, երբ նման հիմքերը վերաբերելի և բավարար են, Դատարանը պետք է հաստատի՝ արդյոք պետական իրավասու մարմինները ցուցադրել են հատուկ ջանասիրություն վարույթի իրականացման շրջանակներում: Նույն կերպ, ցանկացած ժամկետով, նույնիսկ ամենակարճ, ազատազրկման հիմնավորվածությունը իրավասու մարմինների կողմից պետք է համոզիչ կերպով ներկայացվի: Միաժամանակ, անձին կալանավորելու կամ ազատ արձակելու որոշում կայացնելիս, իրավասու մարմինները պարտավոր են հաշվի առնել դատավարությանը անձի մասնակցության ապահովման այլընտրանքները[13]:

Հանցագործություն կատարած լինելու ողջամիտ (հիմնավոր) կասկած

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի համաձայն՝ անձը կարող է զրկվել ազատությունից միայն քրեական վարույթի շրջանակներում, նրան իրավասու իշխանության մոտ տանելու նպատակով հանցագործություն կատարած լինելու <u>ողջամիտ (հիմնավոր) կասկածի հիման վրա[14]:</u>

ՄԻԵԴ-ը հաստատել է, որ հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածն անձի ազատազրկման առաջնային պայմանն է[15]: Հետևաբար, չնայած ողջամիտ կասկածը պետք է գոյություն ունենա անձին ձերբակալելու և առաջին անգամ կալանավորելու ժամանակ, սակայն, ողջամիտ կասկածի գոյությունը և դրա շարունակականությունը պետք է հիմնավորվի կալանավորման ժամկետի երկարաձգման բոլոր դեպքերում[16]:

Հանցագործություն կատարած լինելու կասկածը պետք է հիմնված լինի ողջամիտ հիմքերի վրա, և պաշտոնատար անձի բարեխիղճ կամ անկեղծ հավատամքը բավարար չէ: ***Ողջամիտ կասկածը հիմնավորելու համար պետք է առկա լինեն փաստեր կամ տեղեկություններ, որոնք կբավարարեն օբյեկտիվ դիտորդին, որ անձը կարող էր կատարած լինել ենթադրյալ կոնկրետ հանցագործությունը***[17]:

---

[10] ՄԻԵԴ, *Ուինթերվերպն ընդդեմ Նիդերլանդների (Winterwerp v. the Netherlands),* no.6301/73, 24 հոկտեմբերի 1979, § 39, Series A no. 33:

[11] ՄԻԵԴ, *Բոզանոն ընդդեմ Ֆրանսիայի (Bozano v. France),* no. 9990/82, 18 դեկտեմբերի 1986թ. § 54:

[12] ՄԻԵԴ, *ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKay v. the United Kingdom)* [GC], no. 543/03, 3 հոկտեմբերի 2006, § 34, ECHR 2006-X:

[13] ՄԻԵԴ, *Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia)* no. 5826/03, 22 մայիսի 2012թ, § 140:

[14] ՄԻԵԴ, *Ջեչուսն ընդդեմ Լիտվայի (Jėčius v. Lithuania)* no. 34578/97, 31 հուլիսի 2000, § 50, ECHR 2000-IX:

[15] ՄԻԵԴ, *ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության*, հոդում 12, § 44:

[16] ՄԻԵԴ, *Մամմադովն ընդդեմ Ադրբեջանի (Mammadov v. Azerbaijan),* no. 15172/13, 22 մայիսի 2014, § 90:

[17]ՄԻԵԴ, *Լաբիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy)* [GC], no. 26772/95, 06 ապրիլի 2000, § 155: ՄԻԵԴ, *Գուզզարդին ընդդեմ Իտալիայի (Guzzardi v. Italy),* no. 7367/76, 06 նոյեմբերի 1980, §102:

Վերաբերելի և բավարար հիմնավորումներ

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ չնայած անձին ազատազրկելու համար ողջամիտ կասկածի առկայությունը ազատազրկման պարտադիր պայման է, [որոշ ժամանակ անց] դա բավարար չէ: Ցանկացած ժամանակահատվածով անձի ազատազրկման հիմնավորվածությունը՝ անկախ դրա տևողությունից, պետք է համոզիչ կերպով ցուցադրվի: Միաժամանակ, ի լրումն ներպետական դատարանների կողմից ***վերաբերելի և բավարար*** հիմնավորումների ներկայացման, ներպետական իրավասու մարմինները պարտավոր են ցուցաբերել հատուկ ջանասիրություն քննության իրականացման նկատմամբ[18]:

Անձին կալանավորելու համար դատարանի կողմից բավարար և վերաբերելի հիմնավորումների ներկայացման պահանջը, ի լրումն ողջամիտ կասկածի առկայության, գործում է ***անձի կալանավորման առաջին որոշման կայացման փուլում***, այն է՝ ձերբակալումից անմիջապես հետո[19]: Միաժամանակ, անձին կալանավորելու կամ ազատ արձակելու վերաբերյալ որոշում կայացնելիս, իշխանությունները պարտավոր են հաշվի առնել նաև այլընտրանքային միջոցներ, որոնք կարող են ապահովել նրա ներկայությունը դատաքննությանը[20]:

Կալանավորման հիմքերը, որոնք պետք է ներկայացվեն վերաբերելի և բավարար հիմնավորումներով, ներառում են հետևյալները՝ անձի փախուստի վտանգը, քննությունը խոչընդոտելու վտանգը, վկաների վրա ճնշում գործադրելու, ապացույցներ կեղծելու կամ պայմանավորվածությունների (դավադրության) վտանգը, հանցագործություն կատարելու վտանգը, հասարակական անկարգություններ հարուցելու և կալանավորվածին պաշտպանելու անհրաժեշտությունը[21]:

Անձին ազատելու առնչությամբ դատարանի կողմ կամ դեմ հիմնավորումները չպետք է լինեն ընդհանուր և վերացական[22]: Մասնավորապես, անձի փախուստի վտանգը չի կարող հիմնվել բացառապես անձին սպառնացող պատժի խստության վրա: Այն պետք է գնահատվի վերաբերելի գործոնների համակցությամբ, որոնք կարող են հաստատել փախուստի վտանգի առկայությունը, որ կհիմնավորեն անձի ազատազրկումը կամ նման վտանգը այնքան աննշան կդարձնեն, ինչը չի կարող հիմնավորել նախնական քննության ընթացքում անձի կալանավորումը[23]: Պետք է հաշվի առնել անձի անձնական հատկանիշները, նրա արժեքները, բնակության վայրի առկայությունը, զբաղվածությունը, ընտանեկան կապերը և բոլոր կապերը երկրի ներսում, որտեղ հետապնդվում է,

---

[18] ՄԻԵԴ, *Լաբիտան ընդդեմ Իտալիայի*, § 153, *Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia* [GC], 5826/03, 22 մայիսի 2012, §140:

[19] ՄԻԵԴ, *Բուզաղջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (Buzadji v. the Republic of Moldova* [GC]), 23755/07, 5 հուլիսի 2016, §§ 87 և 102:

[20] ՄԻԵԴ, *Իդալովն ընդդեմ Ռուսաստանի*, § 140:

[21] ՄԻԵԴ, *Բուզաղջին ընդդեմ Մոլդովիայի (Buzadji v. the Republic of Moldova*), no. 23755/07, § 88, ՄԻԵԴ, *Տոմազին ընդդեմ Ֆրանսիայի (Tomasi v. France)* 12850/87, 27 օգոստոսի 1992, § 95, ՄԻԵԴ, *Թոին ընդդեմ Ավստրիայի (Toth v. Austria)* 11894/85, 12 դեկտեմբերի 1991, § 70; ՄԻԵԴ, *Ի. Ա. ընդդեմ Ֆրանսիայի,* 28213/95, 23 սեպտեմբերի 1998, § 108:

[22] ՄԻԵԴ, *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia)* 33376/07, 26 հունիսի 2012, § 92:

[23] ՄԻԵԴ, *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի*, § 95; ՄԻԵԴ, *Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի (Panchenko v. Russia),* no. 45100/98, 08 փետրվարի 2005, § 106:

ինչպես նաև անձի արտասահմանյան հարաբերությունները[24]: Սպասվող պատժի ծանրությունը և ապացույցների կշիռը կարող են լինել վերաբերելի, սակայն որպես այդպիսին որոշիչ չեն, և երաշխիքների ստանալու հնարավորությունը կարող է օգտագործվել նվազեցնելու այդ ռիսկերը:

Անձի կողմից քննության պատշաճ իրականացմանը խանգարելու վտանգը նույնպես չի կարող հիմնվել վերացական հիմնավորումների վրա, այլ պետք է ուղեկցվի ***փաստացի ապացույցներով***[25]: Այն հիմնավորումները, ինչպիսիք են հետագա քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը կամ այն փաստը, որ քննությունը դեռ ավարտված չէ, չեն համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով անձին կալանավորելու ընդունելի հիմքերին[26]:

Մեղադրյալի կողմից հանցագործություններ կատարելու վտանգը նույնպես պետք է գնահատվի գործի փաստերի հիման վրա, որոնք պետք է հավաստվեն և գնահատվեն գործի հանգամանքների լույսի ներքո՝ հաշվի առնելով հատկապես մեղադրյալի անձնական հատկանիշները և անցյալ պատմությունը[27]:

Հատուկ ջանասիրություն

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ներքո քրեական վարույթի ցանկացած փուլում, այդ թվում՝ դատական քննության, անկախ դրա տևողությունից, իրավասու մարմինները կրում են պարտավորություն ցուցաբերել վարույթի իրականացման «հատուկ ջանասիրություն»: Վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանի գործողությունները կամ որոշումները, որոնց հետևանքով որոնց հետևանքով մեղադրյալը մնում է կալանավորված ավելին, քան անհրաժեշտ էր, եթե ցուցաբերվեր ջանասիրություն, կհանդիսանան այս սկզբունքի խախտում:

Այլընտրանքային միջոցների կիրառում

Անձին ազատ արձակելու կամ կալանավորելու որոշում կայացնելիս Կոնվենցիայի 5–րդ հոդվածի 3-րդ մասի ներքո իշխանությունները պարտավորություն ունեն դիտարկելու այլընտրանքային միջոցները, որոնք կապահովեն մեղադրյալի ներկայությունը դատական քննությանը[28]:

Կալանավորման ողջամիտ ժամկետ

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ գործում է ազատության կանխավարկածը, հետևաբար ներպետական դատարանները պարտավոր են ապահովել անձի ազատազրկման ժամկետի ողջամտությունը[29]: Ըստ ՄԻԵԴ-ի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ մինչև դատավարությունն անձին ազատելու առնչությամբ, դատական

---

[24] ՄԻԵԴ, *Նեումեիստերն ընդդեմ Ավստրիայի (Neumeister v. Austria),* 27 հունիսի 1968, § 10:
[25] ՄԻԵԴ, *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի*, § 96:
[26] ՄԻԵԴ, *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի*, § 98:
[27] ՄԻԵԴ, *Գալն ընդդեմ Հունգարիայի (Gal v. Hungary),* no. 62631/11, 11 մարտի 2014թ. § 42:
[28] ՄԻԵԴ, *Ջաբլոնսկին ընդդեմ Լեհաստանի (Jablonski v. Poland),* no. 33492/96, 21 դեկտեմբերի 2000, § 83:
[29] ՄԻԵԴ, *ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության,* հղում 12, § 41:

իշխանություններին ընտրության հնարավորություն չի տալիս կամ անձին ողջամիտ ժամկետում դատարան քննության ներկայացնելու կամ պայմանականորեն ազատ արձակելու: Հակառակը, անձի պայմանական կալանավորումն է, ինչը ողջամիտ ժամկետից երկար չի կարող լինել: Մինչև դատապարտվելը, անձը պետք է համարվի անմեղ, և անձին ազատ արձակելու իրավադրույթի նպատակը նրան ազատ արձակելու պահանջն է, երբ կալանավորումը դադարում է ողջամիտ լինելուց[30]:

Միաժամանակ, անձի կալանավորման ժամկետի ողջամտությունը չի կարող գնահատվել վերացականորեն, այլ պետք է գնահատվի յուրաքանչյուր գործի փաստերի և առանձնահատկությունների լույսի ներքո: Անձի շարունակական ազատազրկումը կարող է համարվել արդարացված կոնկրետ գործում միայն, եթե առկա են հանրային շահի (genuine) պահանջի հստակ ցուցիչներ, որոնք, չնայած անմեղության կանխավարկածին, գերակայում են անձի անձնական ազատության իրավունքին[31]: Հաշվի առնելով հատկապես փախուստի վտանգը, անձի բնութագիրը, նրա բարոյականությունը, արժեքները, կապերը պետության հետ, որտեղ հետապնդվում է, ինչպես նաև միջազգային կապերը պետք է հաշվի առնվեն[32]:

Առաջնայնորեն ներպետական դատական իշխանության պարտավորությունն է երաշխավորել, որ կոնկրետ գործով, անձի նախնական կալանավորման ժամկետը չի անցնում ողջամիտ ժամկետը: Հետևաբար, հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, նրանք պետք է ուսումնասիրեն հանրային շահի առկայության պահանջին վերաբերող բոլոր կողմ և դեմ փաստերը, որոնք հիմնավորում են ազատության իրավունքի սահմանափակումը և պետք է հստակ ցուցադրվեն կայացված որոշումներում[33]:

---

[30] ՄԻԵԴ, *Բուզադջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* (Buzadji v. the Republic of Moldova), 5 հուլիսի 2016թ., § 89:

[31] ՄԻԵԴ, *Լաբիտան ընդդեմ Իտալիայի*, § 152; *Կուդլան ընդդեմ Լեհաստանի* (Kudła v. Poland) [GC], no. 30210/96, §§ 110 և հաջորդները, ECHR 2000-XI:

[32] ՄԻԵԴ, *Նեումեիստերն ընդդեմ Ավստրիայի*, § 10:

[33] ՄԻԵԴ, *Կուդլան ընդդեմ Լեհաստանի*, § 110; *Իդալովն ընդդեմ Ռուսաստանի*, § 141:

Ամփոփ տեղեկատվություն ուսումնասիրված դատական ակտերի վերաբերյալ

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել 149 անձի վերաբերյալ դատական ակտեր, որոնցով ամբաստանյալի նկատմամբ կալանավորումն ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցով փոխարինելու մասին միջնորդությունները դատարանների կողմից բավարարվել են 58 անձի և մերժվել 91 ամբաստանյալների առնչությամբ:

Ամբաստանյալներից 144-ը եղել են արական սեռի ներկայացուցիչներ, 5-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ:

Դատական ոչ բոլոր ակտերն են պարունակել մեղադրյալների տարիքի վերաբերյալ տեղեկատվություն[34]: Մասնավորապես, 81 անձանց տարիքի վերաբերյալ որևէ նշում դատական ակտում չի եղել: Մյուս դեպքերում, տարիքը տատանվել է՝ ըստ աղյուսակի:

Տարիքը	**Անձ**
Մինչև 18	1
18-25	10
26-35	28
36-45	12
46-55	10
56-65	4
65 և ավելի	3
Տեղեկատվություն առկա չէ	81

Ինչ վերաբերում է մեղադրյալների ընտանեկան կարգավիճակին, ապա 41 մեղադրյալներ եղել են ամուսնացած, 1-ի դեպքում միայն առկա է եղել նշում, որ ունի ընտանիք, 4-ը ամուսնալուծված, 5-ը չամուսնացած, որոնցից մեկ անձ եղել է անչափահաս, 4-ը՝ ամուրի, և 94 անձանց ամուսնական կարգավիճակի վերաբերյալ դատական ակտում տեղեկություն առկա չի եղել:

Ամուսնական կարգավիճակ	**Անձ**
Ամուսնացած/ընտանիքի առկայություն	41/1
Ամուսնալուծված	4
Ամուրի	4
Չամուսնացած	5

[34] Հաշվի առնելով նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ ամբստանյալների ծննդյան տարեթվի վերաբերյալ տեղեկությունները հրապարակային չեն նաև դատական տեղեկատվական համակարգում:

Տեղեկություն առկա չի եղել	94

Ըստ ուսումնասիրված դատական ակտերի՝ մեղադրյալներից 41-ի խնամքին եղել է անչափահաս երեխա/երեխաներ, 19 անձի խնամքին չի եղել որևէ անձ, 1 դեպքում խնամքին եղել է հիվանդ հայրը, 88 անձի վերաբերյալ դատական ակտում որևէ տեղեկություն առկա չի եղել:

Բավարարված գործերից 26-ով դատական ակտում նշվում է, որ մեղադրյալը նախկինում ունեցել է դատվածություն, որոնցից 3-ի դեպքում դատվածությունը եղել է մարված, իսկ 23-ով նշվում է, որ մեղադրյալը նախկինում դատվածություն չի ունեցել: Գործերից 1-ով դատարանը նշել է նախկինում դատվածության առկայության մասին, սակայն պաշտպանի կողմից նշվել է, որ դատվածություն առկա չէ, 1 գործով առկա է մեղադրյալի վերաբերյալ այլ մեղադրական ակտի առկայության մասին: Գործերից 8-ի դեպքում դատվածության առկայության կամ բացակայության վերաբերյալ դատական ակտում նշումը բացակայում է:

Կալանավորումը այլ խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու դեպքերում 37 ամբաստանյալ նախկինում դատված են եղել, ընդ որում 5-ի դեպքում դատվածությունը մարված է եղել, 40 ամբաստանյալ նախկինում դատված չի եղել, 14-ի վերաբերյալ դատական ակտում որևէ տեղեկություն չի եղել:

10 անձի դեպքում դատական ակտում եղել է տեղեկատվություն հաշմանդամության վերաբերյալ: Անհրաժեշտ է փաստել, որ հաշմանդամություն ունեցող 8 անձի դեպքում խափանման միջոցը փոխելու մասին միջնորդությունը դատարանի կողմից բավարարվել է: Առողջական վիճակի վերաբերյալ այլ հարցերը կքննարկվեն ստորև:

Դատական ակտերի ուսումնասիրությունը փաստում է, որ առավել մեծ թվով դատական ակտերը կայացվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ 77 անձի վերաբերյալ դատական ակտերը, հաջորդը՝ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն է՝ 22 անձի վերաբերյալ, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ 13 անձի վերաբերյալ, Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ 12 անձի վերաբերյալ և այլն:

Գործը քննող դատարանը.

Դատարան	**Մերժում**	**Բավարարում**
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	43	34
Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան	11	11
Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան	12	1

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	8	4
Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան	6	1
Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան	6	2
Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան	5	2
Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	-	3
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1	-

Առավել մեծ թվով դատական ակտերը կայացվել են հետևյալ դատավորների կողմից.

Դատավոր	**Մերժում**	**Բավարարում**
Հարություն Մանուկյան	7	7
Վարդան Լ. Գրիգորյան	6	5
Սուսաննա Գզոզյան	7	4
Դավիթ Հարությունյան	2	8
Արման Հովհաննիսյան	2	7
Գեղամ Մարգարյան	5	3

Ուսումնասիրված որոշումից 6-ը կայացվել են մարտ ամսվա ընթացքում, 91-ը ապրիլի, 36-ը մայիսի և 16-ը հունիսի ընթացքում:

Ամիս	Որոշումներ	Բավարարված	Մերժված
Մարտ	6	5	1
Ապրիլ	91	38	53
Մայիս	36	11	25
Հունիս	16	4	12

Հանցագործությունների տեսակների տեսանկյունից՝ բավարարված միջնորդությունների շրջանակներում նկատվում են հետևյալ միտումները. բավարարված միջնորդությունների մեծամասնությունը վերաբերել է սեփականության դեմ ուղղված հանցագործություններին, մասնավորապես՝ գողության 18 դեպք (177-րդ հոդված), ավազակության 5 դեպք (175-րդ

հոդված), կողոպուտի 3 դեպք (176-րդ հոդված), խարդախության 5 դեպք (178-րդ հոդված): Հաջորդը բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններն են, մասնավորապես՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելու 10 դեպք (266-րդ հոդված), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգության 5 դեպք (267.1-րդ հոդված), թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության 6 դեպքը (268-րդ հոդված): Դրանց հետևում են կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները, ներառյալ՝ սպանության 3 դեպք (104-րդ հոդված), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու 10 դեպք (112-րդ հոդված), ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու 1 դեպք (119-րդ հոդված): Մնացած դեպքերը վերաբերել են հասարակական անվտանգության, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների (6 դեպք), հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների (6 դեպք), տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների (3 դեպք), կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների (3 դեպք), կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների (2 դեպք) և պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության 1 դեպք:

Մերժված միջնորդությունների դեպքում ամբաստանյալներին մեղսագրվող հանցագործութունները ներառել են սպանության 26 դեպք (104-րդ հոդված, 15-ով՝ նույն հոդվածի 1-ին մասով), այդ թվում՝ համակցված այլ հանցագործությունների հետ, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու 4 դեպք (112-րդ հոդված), ավազակության 9դեպք (175-րդ հոդված), այդ թվում՝ համակցված այլ հանցագործությունների հետ, կողոպուտի 3 դեպք (176-րդ հոդվածի տարբեր մասերով), գողության 14 դեպք՝ (177-րդ հոդվածի տարբեր մասերով), այդ թվում՝ համակցված այլ հանցագործությունների հետ, խարդախության 17 դեպք (178-րդ հոդվածի տարբեր մասերով), յուրացման 2 դեպք (179-րդ հոդված)՝ այլ հանցագործությունների հետ համակցված, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելու 18 դեպք (266-րդ հոդված), այդ թվում՝ համակցված այլ հանցագործություններով, որոնցից 15-ով մեղադրանքն առաջադրված է եղել ՀՀ ՔՕ 266-րդ հոդվածի 3-րդ մասով, թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության 6 դեպք (268-րդ հոդվածի տարեր մասեր) և այլն:

Աղյուսակ. Ամբաստանյալին մեղսագրվող արարքի որակումը: Ներկայացված են մեծ թվով հանցակազմերը:

Քրեական օրենսգրքի հոդված	Բավարարում	Մերժում
104	3	26
112	10	4
175	5	9
176	3	3
177	18	14
178	5	17
266	10	18
267.1	5	7
268	6	6

Ուսումնասիրված որոշումների համաձայն, 52 ամբաստանյալ մասնակցել է կալանավորման հարցի քննարկմանը, 19 անձի դեպքում որոշումը որևէ նշում չի պարունակել ամբաստանյալի մասնակցության վերաբերյալ: Մնացյալ դեպքերում, ամբաստանյալը չի մասնակցել դատական նիստին: Ընդ որում, մերժված որոշումների առնչությամբ 91 ամբաստանյալներից 31-ն անձամբ մասնակցել է դատական նիստին, 48-ը չի մասնակցել խափանման միջոցի քննարկմանը վերաբերող դատական նիստին, 13 ամբաստանյալների մասնակցության մասին նշում չկա դատական ակտում:

Որպես ամբաստանյալի՝ դատական նիստին չմասնակցելու պատճառաբանություն դատական ակտում նշված են եղել հետևյալները.

- անհնարին է եղել ապահովել ամբաստանյալի մասնակցությունը՝ COVID-19 համավարակի բերումով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության ռեժիմի սահմանափակումների պատճառաբանությամբ,
- առկա է եղել ամբաստամյալի/պաշտպանի դիմումը/միջնորդությունը՝ դատական նիստն իր/պաշտպանյալի բացակայությամբ անցկացնելու վերաբերյալ,
- ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության պայմաններում ուղեկցող ռեժիմի ծանրաբեռնվածությունը

Ըստ ուսումնասիրված դատական որոշումների՝ մեղադրողները ներկա են գտնվել խափանման միջոցի քննարկման վերաբերյալ 109 դատական գործով: Ընդ որում, խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժված որոշումներից 70-ի դեպքում մեղադրյալը ներկա է գտնվել դատական նիստին, բավարարվածների՝ 39-ի նիստին: Դատական նիստին, մեղադրողի բացակայությունը որոշ դեպքերում պատճառաբանվել է աշխատանքային ծանրաբեռնվածությամբ, կորոնավիրուսի համավարակի տարածմամբ, մնացյալ դեպքերում մեղադրողի բացակայության պատճառաբանություն որոշումը չի պարունակել:

Խափանման միջոցը փոփոխելու մասին միջնորդությունների փաստարկները

Ուսումնասիրության շրջանակներում բավարարված միջնորդությունների մեծամասնությամբ պաշտպանները խափանման միջոց կալանավորումն այլ խափանման միջոցով փոխելու միջնորդություն ներկայացնելիս անդրադարձել են համավարակի արդյունքում առաջացած ռիսկերին: Այդ ռիսկերի վերաբերյալ պաշտպանները պնդումներ չեն ներկայացրել 13 միջնորդություններով[35]: Այս դեպքերում պաշտպանները խափանման միջոցը փոխարինելը հիմնավորել են այլ հանգամանքներով, ներառյալ՝ մեղադրյալի կողմից հարազատների խնամքին առկա անչափահասների մասին հոգ տանելու անհրաժեշտությունը, կալանավորման հիմքերին առնչվող ռիսկերի նվազումը:

25 միջնորդություններով պաշտպանները որպես ռիսկային գործոն նշել են իրենց պաշտպանյալի առողջական վիճակը և հիվանդությունները: Նշված 25 միջնորդություններից միայն 9-ով է միջնորդությունների հիմքում դրվել բացառապես անձի առողջական վիճակը:

Մնացյալ գործերով առողջության վերաբերյալ պնդումները ներկայացվել են ի թիվս այլ պնդումների, ներառյալ՝ տարիք,[36] ՔԿՀ-երի գերծանրաբեռնվածություն,[37] համավարակով պայմանավորված՝ նիստերին ներկայանալու անհնարինություն/դժվարություններ,[38] ՔԿՀ-երում վարակի առկայության դեպքեր: 17 գործերով պաշտպաններն ընդհանուր հղում են կատարել ԽԿԿ զեկույցին՝ առանց մասնավորեցնելու անհատական այն հանգամանքները, որոնցով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել ընտրելու այլընտրանքային խափանման միջոց:

Նշված 25 դեպքերից 20-ով դատարանները պաշտպանների պնդումները հաշվի են առել և հաստատել իրենց եզրահանգումներում, այլ խոսքով՝ պաշտպանների պնդումները որոշիչ են եղել խափանման միջոցի վերաբերյալ հարցը լուծելիս: Սակայն որոշում կայացնելիս շատ գործերով հաշվի են առնվել նաև այլ հանգամանքներ (այս մասին՝ ստորև):

Մերժված որոշումներից 31 դեպքում է ամբաստանյալի հիվանդությունը կամ վատառողջ լինելը պաշտպանի կողմից վկայակոչվել որպես ռիսկային գործոն,[39] ընդ որում բացառապես առողջական վիճակով պայմանավորված պնդումներ ներկայացվել են 4 գործով: Արձանագրվել են դեպքեր, երբ պաշտպանության կողմի կողմից ընդհանրական ձևով (ըստ որոշումների բովանդակության) նշվել է ամբաստանյալի վատառողջ լինելը, հիվանդություններ ունենալը՝ առանց հստակեցնելու հիվանդությունները: 16 դեպքում պաշտպանության կողմից վկայակոչվել է ՔԿՀ-ների գերբեռնվածությունը,[40] 4 դեպքում՝ ՔԿՀ-

[35] Մի շարք այլ միջնորդությունների դեպքում այնքանով, որքանով դրանց բովանդակությունը վերարտադրված է դատական ակտերում, պարզ չէ՝ համավարակի վերաբերյալ պնդումներ ներկայացվել են, թե ոչ:
[36] Օրինակ ԵՔՐԴ/0341/01/08, ԵԴ/0651/01/19, ԵԴ/0269/01/19, ԳԴ4/0034/01/19, ԼԴ1/0027/01/18:
[37] Օրինակ ԵԴ/0855/01/18, ԱՐԴ/0076/01/19:
[38] Օրինակ ԵԴ/0733/01/19, ԵԴ/0237/01/19:
[39] Օրինակ, ԵԴ/0532/01/19, ԿԴ3/0061/01/17,
[40] Օրինակ, ԱՐԴ/0118/01/19, ՇԴ/0007/01/20, ԵԴ/0226/01/19:

ներում վարակի տարածման դեպքերը,[41] 1 դեպքում՝ դատարանի աշխատակազմում վարակի հայտնաբերումը,[42] 3-ում՝ ամբաստանյալի տարիքը, 9 դեպքում՝ դատական նիստերի չիրականացումը, դատական գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը, դատական նիստերի ձգձգումները[43] և այլն: 39 անձի առնչությամբ միջնորդությունը պարունակել է հղում ԽԿԿ զեկույցի առաջարկներին՝ մատնանշելով կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված ընդհանրական ռիսկերը՝ առանց մատնանշելու կոնկրետ ամբաստանյալի առնչությամբ ռիսկային գործոնի առկայությունը և դրսևորումը[44]:

Ուսումնասիրված բոլոր գործերով, անկախ խափանման միջոցի քննարկման առիթից, պաշտպանության կողմը միջնորդել է ամբաստանյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառել կամ չկիրառել որևէ խափանման միջոց:

Բավարարված միջնորդություններից 25 դեպքում միջնորդվել է ամբաստանյալի նկատմամբ կիրառել գրավը՝ որպես խափանման միջոց, 22 դեպքում միջնորդվել է կիրառել ստորագրություն չհեռանալու մասին կամ գրավ, 1 դեպքում միջնորդվել է կիրառել ստորագրություն չհեռանալու մասին, գրավ կամ անձնական երաշխավորություն, իսկ 10 դեպքում՝ ստորագրություն չհեռանալու մասին:

Բավարարված միջնորդությունների 25-ի վերաբերյալ կայացված որոշումներով խափանման միջոց է ընտրվել գրավը, 22-ով՝ գրավը և չհեռանալու մասին ստորագրությունը, 9-ով՝ չհեռանալու մասին ստորագրությունը, իսկ 1 անձի դեպքում կիրառվել է գրավ, ստորագրություն չհեռանալու մասին և անձնական երաշխավորություն, 1 անձի դեպքում՝ խափանման միջոցը վերացվել է:

Մերժված միջնորդություններից 62 դեպքում միջնորդվել է ամբաստանյալի նկատմամբ կիրառել գրավը՝ որպես խափանման միջոց, 14 դեպքում միջնորդվել է կիրառել ստորագրություն չհեռանալու մասին կամ գրավ, 4 գործով ներկայացվել է միջնորդություն ամբաստանյալի նկատմամբ կիրառել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց, 1 դեպքում գրավ և անձնական երաշխավորություն, 1 դեպքում միջնորդվել է կիրառել ծնողի վերահսկողության հանձնելը: 7 անձի առնչությամբ պաշտպանության կողմի միջնորդությամբ դատարանին ներկայացվել է ամբաստանյալի նկատմամբ կիրառված կալանավորումը փոխել ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցով՝ առանց մասնավորեցնելու խափանման միջոցի կոնկրետ տեսակը:

Գրավ կիրառելու մասին բավարարված միջնորդությունների մեծամասնությամբ պաշտպանները նշել են գրավի գումարի նախընտրելի չափ (առավելապես նշվել է 1-2.000.000

[41] Օրինակ, ԵԴ/0062/01/20, ԿԴ3/0045/01/19:
[42] ԿԴ3/0045/01/19
[43] ՍԴ/0001/01/19; ԵԴ/0532/01/19; ԵԴ/0144/01/19:
[44] Օրինակ, ԵԴ/0018/01/19; ԵԴ/0217/01/18;

ՀՀ դրամը՝ որպես նախընտրելի չափ՝ 14 միջնորդությամբ, այնուհետև՝ 500.000 ՀՀ դրամը՝ 10 միջնորդությամբ և 2 միջնորդությամբ նշվել է 3-4 միլիոն ՀՀ դրամը), և միայն քիչ գործերով են պաշտպանները այն թողել բացառապես դատարանի հայեցողությանը՝ խնդրելով նշանակել գրավի ողջամիտ չափ: Նշենք, որ գործերի մեծամասնությամբ դատարանների կողմից նշանակված գրավի չափը ավելի մեծ է եղել, շատ դեպքերում՝ պաշտպանների կողմից մատնանշված չափի կրկնակին, 8 գործով՝ համընկել պաշտպանի միջնորդությամբ նշված չափին, և միայն երկու դեպքում եղել ավելի քիչ, քան միջնորդությամբ նշված չափը:[45]

3 անձի առնչությամբ պաշտպանները դատարանի կողմից արդեն իսկ գրավի չափ նշանակելուց հետո կրկին ներկայացրել են միջնորդություն՝ պահանջելով գրավի չափի նվազեցում այն հիմնավորմամբ, որ նշանակված չափով գրավի վճարման անհնարինության արդյունքում մեղադրյալը շարունակում է գտնվել անազատության մեջ:

Պատկերն այլ է գրավի կիրառումը մերժված որոշումների դեպքում, որոնցից 36 դեպքում պաշտպանության կողմից գրավի կոնկրետ չափ չի նշվել՝ թողնելով դատարանի հայեցողությանը, խնդրելով նշանակել գրավի «ողջամիտ չափ»: Մյուս դեպքերում, գրավի չափը տատանվել է 500.000 ՀՀ դրամից մինչև 5.000.000ՀՀ դրամը: Առավել շատ միջնորդությունները պարունակել են 1.000.000ՀՀ դրամ գումարը՝ որպես գումարի չափ՝ 12 դեպքում, 500.000ՀՀ դրամը՝ 10 դեպքում, 6 դեպքում՝ 2.000.000ՀՀ դրամը: 2 դեպքում նշվել է մինչև 3.000.000ՀՀ գումարը, 4 դեպքում՝ 5.000.000ՀՀ դրամը և այլն:

[45] Հաշվի առնելով, որ ոչ բոլոր դատական ակտերում է վերարտադրված պաշտպանների միջնորդությունների ամբողջական բովանդակությունը՝ նշված վիճակագրական տվյալները հնարավոր է՝ լիարժեք ճշգրիտ չլինեն:

Խափանման միջոցը փոփոխելու մասին միջնորդությունների վերաբերյալ մեղադրողների հակափաստարկները

Մինչ մեղադրողների ներկայացրած փաստարկներին անդրադառնալը նշենք, որ բավարարված միջնորդությունների առնչությամբ մեղադրողները միայն 7 գործերով չեն ներկայացրել առարկություններ,[46] որոնցից մեկով մեղադրողը նույնպես, ինչպես պաշտպանը, ներկայացրել է միջնորդություն կալանավորումը չհեռանալու մասին ստորագրությամբ փոխարինելու մասին միջնորդություն:[47] Ուսումնասիրված երեք գործերով մեղադրող դատախազները ևս ներկայացրել են միջնորդություն ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոցը փոխելու վերաբերյալ:[48] Մեկ գործով մեղադրողը չի առարկել ներկայացված միջնորդության դեմ:[49] Մի դեպքում դատախազը համաձայնել է պաշտպանի փաստարկներին առ այն, որ առողջական վիճակով և տարիքով պայմանավորված՝ անձը գտնվում է խոցելի խմբում, սակայն հակադարձել է՝ նշելով, որ ՔԿՀ-ում շփումները ավելի սահմանափակ կլինեն, քան ազատության մեջ գտնվելու դեպքում:[50] Այլ գործով մեղադրողը նշել է, որ չի կարող գնահատել հիվանդության համատեղելիությունը խափանման միջոցի պայմաններին, սակայն միևնույն ժամանակ չի ցանկանում կասկածի տակ դնել մեղադրյալի հիվանդությունները:[51] Մի շարք գործերով մեղադրողներն իրենց փաստարկներում անդրադարձ չեն կատարել համավարակին՝ անդրադառնալով միայն կալանավորման հիմքերին կամ նշելով այն, որ կալանավորումը միակ խափանման միջոցն է, որ կարող է ապահովել անձի պատշաճ վարքագիծը:[52]

Որպես հակափաստարկ պաշտպանների կողմից համավարակի վերաբերյալ բերված պնդումների՝ մեղադրողները հիմնականում ներկայացրել են հետևյալ խումբ պատճառաբանությունները.

- Կորոնավիրուսի համավարակի առկայությունը միայն բավարար չէ խափանման միջոցը փոխելու համար, քանի որ չեն ներկայացվել տվյալներ, որ կոնկրետ ամբաստանյալն ունի այնպիսի հիվանդություն, որի հիմքով անազատության մեջ գտնվելը վտանգում է վերջինիս կյանքն ու առողջությունը: Հակառակ դեպքում, քրեակատարողական հիմնարկներում գտնվող բոլոր անձանց պետք է ազատ արձակել:

[46] Տես ՇԴ/0046/01/18, ԵԴ/0269/01/19, ԵԴ/0816/01/19, ԵԴ/0162/01/19, ԵԴ/0620/01/19, ԱՐԴ/0109/01/19, ԵԴ/0430/01/18:
[47] Օրինակ ԵԴ/0620/01/19
[48] Տես ԵԴ/0816/01/19; ԵԴ/0620/01/19; ԱՐԴ/0109/01/19 գործերով դատական ակտերը:
[49] ԵԴ/0430/01/18
[50] Օրինակ ԵԴ/0269/01/19
[51] Օրինակ ԼԴ4/0002/01/17
[52] Տես, օրինակ, ՏԴ/0036/01/20, ԵԴ/0174/01/20, ԼԴ1/0027/01/18, ԵԱԴԴ/0057/01/17, ԵԴ/0314/01/19, ԼԴ2/0009/01/19, ԵԴ/0816/01/19, ԵԴ/0580/01/18:

- Պաշտպանի կողմից չեն ներկայացվել անձի՝ խոցելի խմբում գտնվելու փաստը հաստատող ապացույցներ (օրինակ՝ տարիքի կամ առողջական վիճակի վերաբերյալ),[53]
- Անձի գտնվելու ՔԿՀ-ում չեն հաստատվել վարակի դեպքեր, ինչով պայմանավորված՝ ռիսկեր առկա չեն,
- ՔԿՀ-ում պահպանվում են սանիտարական պայմանները, չկա գերծանրաբեռնվածություն,[54]
- ՔԿՀ-ներում ավելի ապահով է, քանի որ կալանավայրերում ավելի խիստ միջոցառումներ են ձեռնարկվում հակահամաճարակային նորմերը պահպանելու կապակցությամբ,
- Պաշտպանի կողմից ներկայացված հիվանդություններից որևէ մեկը չի համապատասխանում կառավարության հաստատած՝ կալանքի հետ անհամատեղելիության ցուցակի մեջ ներառված հիվանդություններին,
- Հաշվի առնելով, որ համավարակը պահանջում է մեկուսացում՝ ՔԿՀ-ում մեկուսացվածությունն ավելի ապահով է, քան ազատության մեջ գտնվելու դեպքում,[55]
- ԽԿԿ զեկույցը պարտադիր բնույթի փաստաթուղթ չէ, դրանում առկա հանգամանքները պետք է հիմնավորվեն գործի փաստական հանգամանքներով: ԽԿԿ զեկույցը չի կարող չեզոքացնել կալանքի հիմքերը,
- Որոշ գործերով մեղադրողները միայն նշել են, որ կալանավորումից բացի այլ խափանման միջոցը չի կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը,[56]
- Նոր տիպի կորոնավիրուսի տարածման արդյունքում երկրում հայտարարված արտակարգ դրության հիմքով դատական նիստերի հետաձգմամբ պայմանավորված՝ խափանման միջոցը փոփոխելու հիմնավորմանը մեղադրողն արձագանքել է, որ այդ հանգամանքն օբյեկտիվ պատճառ է, կախված չէ դատավարության որևէ սուբյեկտից, և պետք է գնահատման ենթարկվի նաև ամբաստանյալի ազատության իրավունքի սահմանափակման և այդ կապակցությամբ հանրային շահի հավասարակշռման անհրաժեշտությունը[57]:

Կախված ենթադրյալ հանցագործության տեսակից՝ մեղադրողները կալանավորման հիմքերի ռիսկերը առավել բարձր են գնահատել թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների դեպքում՝ դրանք գնահատելով որպես վտանգավորության առավել բարձր աստիճան ներկայացնող, անձի կողմից կրկին հանցագործություն կատարելու ռիսկերի մասին վկայող գործոն:[58]

---

[53] ԵԴ/0022/01/19, ԼԴ4/0002/01/17, ԿԴ3/0032/01/19:
[54] ԵԴ/0687/01/18, ԿԴ1/0003/01/19:
[55] ԳԴ4/0034/01/18, ԵԱԴԴ/0030/01/17:
[56] Օրինակ ԼԴ2/0075/01/19, ԵԴ/0353/01/19:
[57] Օրինակ, ԱՎԴ/0125/01/19:
[58] ԵԴ/0855/01/18, ՍԴ/0229/01/19, ԵԴ/0895/01/18:

Մերժված միջնորդությունների առնչությամբ մեղադրողները չեն ներկայացրել իրենց դիտարկումները 7 գործով: Մեղադրողների առարկությունների բոլոր դեպքերում նշվել է, որ կալանավորման հիմքերը չեն վերացել և շարունակում են առկա լինել, և ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցն ի զորու չի լինի ապահովել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը: Միաժամանակ, մեղադրողների կողմից մեծամասամբ շեշտը դրվել է անձին մեղսագրվող հանցագործության բնույթի ու հանրային վտանգավորության վրա[59]: Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող ամբաստանյալների դեպքում մեղադրողների կողմից փաստարկվել է նաև Հայաստանի Հանրապետության տարածքը լքելու հնարավորությունը[60]:

Կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված ռիսկերին մեղադրողներն անդրադարձել են մերժված միջնորդությունների առնչությամբ ներկայացված առարկություններից 40-ում: Որպես հիմնավորումներ՝ մեղադրողների կողմից նշվել են հիմնականում հետևյալ փաստարկները.

- Կորոնավիրուսի համավարակի առկայությունը միայն բավարար չէ խափանման միջոցը փոխելու համար, քանի որ չի ներկայացվել տվյալ, որ կոնկրետ ամբաստանյալն ունի այնպիսի հիվանդություն, որի հիմքով անազատության մեջ գտնվելը վտանգում է վերջինի կյանքը և առողջությունը կամ ամբաստանյալը գտնվում է համավարակի նկատմամբ խոցելի անձանց շարքում[61]: Ամբաստանյալի մոտ իմունային համակարգի էական թուլացման նկատելի լինելը չի կարող վկայել կորոնավիրուսային հիվանդության խոցելի խմբում գտնվելու մասին:[62]
- Կորոնավիրուսային հիվանդության համավարակի առնչությամբ մեղադրողների հաջորդ ամենատարածված հակափաստարկն այն էր, որ այն քրեակատարողական հիմնարկում, որտեղ գտնվում է ամբաստանյալը համավարակի տարածման դեպքեր չեն արձանագրվել[63]: Ավելին, որոշ դեպքերում մեղադրողները նշել են, որ քրեակատարողական հիմնարկներն ամենաապահով վայրերն են, որտեղ առավելագույնս սահմանափակված են բոլոր հնարավոր շփումները[64]:
- Անդրադառնալով ԽԿԿ զեկույցին՝ մեղադրողների կողմից հիմնականում նշվել է, որ այն կրում է խորհրդատվական բնույթ և դրանից չի հետևում, որ այն ունի բացարձակ նշանակություն և քննարկվող դեպքում չի կարող չեզոքացնել կալանքի հիմքերը[65]:

---

[59] Օրինակ, ՍԴ/0001/01/19:
[60] Օրինակ, ԵԴ/0532/01/19:
[61] Օրինակ ԼԴ/0063/01/19, ԵԴ/0123/01/20, ԵԴ/0144/01/18, ԵԴ/0018/01/19, ԵԴ/0808/01/19:
[62] ԵԴ/0532/01/19:
[63] Օրինակ ԵԴ/0002/01/20, ԵԴ/0067/01/20, ԵԴ/1231/01/19, ԵԴ/0808/01/19:
[64] Օրինակ ՇԴ/0007/01/20,
[65] Օրինակ ԵԱՆԴ/0002/01/17; ՇԴ/0007/01/20; ԵԴ/0908/01/19:

Այս առնչությամբ անհրաժեշտ է փաստել, որ ըստ 2020 ապրիլի 3-ի հաղորդագրության՝ ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ ուսումնասիրվել և առանձնացվել են նախաքննության և դատական քննության փուլում գտնվող քրեական գործերը, որոնցով նախնական կալանքի տակ են գտնվում կորոնավիրուսային հիվանդության վարակման և հիվանդացության խոցելի տարիքային խմբում գտնվող ծանր և/կամ քրոնիկական, մի քանի համակցված հիվանդություններ ունեցող անձինք: ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2020թ. մայիսի դրությամբ կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդություններ մեղադրողների կողմից ներկայացվել է դատական քննության փուլում գտնվող 18 գործերով:[66]

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության՝ տվյալ գործերով անցնող անձինք ունեցել են տարբեր հիվանդություններ, այդ թվում՝

- թոքերի ինֆիլտրատիվ տուբերկուլյոզ քայքայման փուլում: Աթեռոսկլերոտիկ կարդիոսկլերոզ, նախասրտերի շողացում սախիսիստոլիկ ձև: Փորոքային էքստրասիստոլիա: Ասցիտ: Պլևրիտ: Դիսցիրկուլյատոր էնցեֆալոպաթիա: Աջակողմյան աճուկային սկսվող թեք ճողվածք: Ենթադրում է հեմատուրիա,
- Իշեմիկ ինսուլտ, անդամահատվել է ձեռքը, առկա է երկկողմնաի թոքաբորբ ախտորոշումը,
- Ծնոտների օստեոմիելիտ, օտեոնեկրոզ /դիզոմորֆինիզմ, բենզին/,
- ՄԻԱՎ /ՁԻԱՀ Կ/Փ, խիստ արտահայտված իմունային անբավարարություն,
- ՄԻԱՎ վարակ 1-ին Կ/Փ,
- ՄԻԱՎ վարակ 2-րդ Կ/Փ,
- ՄԻԱՎ վարակ 4-րդ Կ/Փ,
- Սահմանափակ մեղսունակ, շիզոֆրենիա պարանոիդ ձև,
- Ռեցիդիվող օրալ կանդիդոզ, մակերեսային գաստրիտ, դուոդենիտ, կատարալ պրոկտոսիգմոիդիտ, շագանակագեղձի հիպերպլազիա, ձախ երիկամի գոտկային դիստոպիա, երիկամների քիստաներ, մնացորդային փոփոխություններ կլինիկորեն բուժված թոքերի տուբերկուլյոզից հետո թոքերի վերին բլթերում ֆիբրոզի, պինդ և կրակալված օջախների առկայությամբ:[67]

Այս պայմաններում անհասկանալի է նույնանման և համակցված հիվանդություններ ունեցող անձանց դեպքում, հատկապես՝ շնչառական հիվանդությունների պայմաններում մեղադրող դատախազների կողմից առարկությունների ներկայացումը դատարանին: Օրինակ, ուսումնասիրված գործերում, որոնցով ներկայացված միջնորդությունները բավարարվել են դատարանների կողմից, ամբաստանյալների մոտ ախորոշված են եղել, օրինակ, հետևյալ հիվանդությունները.

- Th8-12 տուբերկուլոզային սպոնդիլիտ ակտիվ փուլում, կիֆոսկոլիոտիկ դեֆորմացիա, երկկողմանի օջախային թոքաբորբ ներծծման փուլում: Ուղեկցող հիվանդություններ՝

[66] Նախաքննության փուլում գտնվող ևս 2 քրեական գործով դատախազների կողմից կայացվել են անձանց նկատմամբ կալանավորումն անազատության հետ չկապված խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ դատավարական որոշումներ:

[67] ՀՀ գլխավոր դատախազության 25.05.2020թ. պատասխան գրություն

տոքսիկ դիլատացիոն կարդիոմիոպաթիա, թոքային հիպերտենզիա I-II, վիրուսային հեպատիտ C, 2-րդ կարգի հաշմանդամ[68],

- «Մնացորդային փոփոխություններ, կլինիկորեն բուժված տուբերկուլոզից հետո, աջ թոքի վերին բլթի U1-ում պինդ օջախների տեսքով», ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված գրության համաձայն՝ գտնվում է ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վարդաշեն» բժշկական ստորաբաժանման դինամիկ հսկողության ներքո քրոնիկ բրոնխիտ ախտորոշմամբ և ստանում է համապատասխան սիմտեմատիկ բուժում:
- Տասներկումատնյա աղու թափածակված խոց: Տարածուն թարախային պերիտոնիտ, սուր որովայն, խոռոչավոր օրգանի պերֆորմացիա, վիրահատվել է լապարատոմիա, ռևիզիա, թափածակված խոցի կարում, որովայնի խոռոչի սանացիա և դրենավորում: Ըստ սոնոգրաֆիկ հետազոտության տվյալների՝ արձանագրվել է, որ լյարդը դիֆուզ փոփոխված է, լեղապարկը, պակրեասը, փայծաղը, երիկամներն՝ առանց տեսանելի փոփոխություններ: Պորտալ և բիլիար հիպերտենզիա չկա: Ներկայացվել են նաև բժշկական տեղեկանքներ առ այն, որ անձը է բժշկական սպասարկման հսկողության տակ հետևյալ ախտորոշումով՝ թոքերի խրոնիկական օբստրակտիվ հիվանդություն, խիստ ծանր աստիճանի մետատաբերկալոզ փոփոխությունների ֆոնին: Ենթադրվում է տուբերկուլոմա ձախ թոքի ստորին բլթի: Խոցային հիվանդություն: Վիճակ տարած թափածակված խոցի կարումից հետո: Դիսկի արտափքում, միոլյումբալգիա (…):(…) անձը դուրս է գրվել «Դատապարտյալների հիվանադանոց» քրեակատարողական հիմնարկից բավարար առողջական վիճակով, անհրաժեշտ խորհուրդներով և ախտորոշմամբ՝ ողնաշարի ձախ հատվածի դեգենարատիվ դիստրոֆիկ փոփոխություններ, L5/S1 սկավառակի ճողվածք, լյումբոիշիազ, վիճակ կլինիկորեն բուժված թոքերի տուբերկուլյոզից հետո,ֆիբրիզի տեսքով, քրոնիկական արտաքին և ներքին թութք, արյունահոսության հակումով: (…)[69]

Վերոգրյալ գործերով մեղադրող դատախազները ոչ միայն իրենք չեն ներկայացրել անձանց խափանման միջոցը փոխելու միջնորդություններ այն դեպքում, երբ տուբերկուլոզային հիվանդության հետ համակցած այլ հիվանդությունների պայմաններում նման միջնորդություն ներկայացված եղել է, այլև առարկել են պաշտպանների կողմից ներկայացված միջնորդության դեմ: Նմանապես, անհասկանալի է «սահմանափակ մեղսունակություն, շիզոֆրենիա, պարանոիդ ձև» ախտորոշում ունեցող անձի խոցելիությունը կորոնավիրուսային հիվանդության համավարակի նկատմամբ այլ հիվանդությունների բացակայության պայմաններում:

[68] ԵԴ/0716/01/19
[69] ԳԴ4/0034/01/18

Դատարանների եզրահանգումները և հիմնավորումները

Վերլուծելով դատարանի կողմից բավարարված միջնորդությունների վերաբերյալ որոշումները՝ կարելի է ընդհանրացնել հետևյալ դիտարկումները.

- գործերի միայն քիչ մասով է, որ անձի առողջական վիճակը կամ տարիքը ինքնին համավարակի պայմաններում հիմք են հանդիսացել խափանման միջոցի փոփոխման համար,
- առողջական վիճակը գործերի մեծամասնությամբ դիտարկվել է ի թիվս այլ հանգամանքների և գործոնների, օրինակ՝ անձի կարգավիճակին վերաբերող հանգամանքներ, համավարակի արդյունքում դատական նիստերի օրերի նշանակման անորոշությունը, նիստերի ձգձգումները, անձի՝ արդեն տևական ժամանակ անազատության մեջ լինելը և պատժի վերջնական ժամկետից հաշվակցման դեպքում տարբերությունը հաշվի առնելու անհրաժեշտությունը, հիվանդությունների հետ կապված մի քանի գործերով կապված առողջական վիճակի՝ կալանքի հետ համատեղելիությունը պարզելուն ուղղված փորձաքննությունների կատարման հետ կապված ձգձգումները, առանձին գործերով դատավորների կազմի փոփոխությունը և դրա հետ կապված ձգձգումները, դատավորների ծանրաբեռնվածության և համավարակի արդյունքում առաջացած ձգձգումների արդյունքում նիստերի օրերի նշանակման անորոշությունը, ինչի արդյունքում անձինք տևական ժամանակ կշարունակեն մնալ անազատության մեջ:[70]

Ինչպես նշվեց, առողջական վիճակը որպես ռիսկային գործոն է նշվել 25 միջնորդություններով, որոնցից 20-ի դեպքում դատարանները դրանք հաշվի են առել իրենց եզրահանգումներում: Որոշ գործերով ընդգծվել են ոչ թե համավարակի առաջացրած վտանգները ինքնին հիվանդության՝ անձի ռիսկային խմբին պատկանելիությունը որոշելու տեսանկյունից, այլ համավարակի հետևանքով առաջացած իրավիճակում անձի առողջական վիճակի՝ կալանավորման հետ համատեղելիությունը պարզելուն ուղղված փորձաքննության ավարտի ժամանակի անորոշությունը:[71]

Միջնորդություններից 24-ով կողմերը չեն ներկայացրել հիվանդությունների հիմքով կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու հիմնավորումներ:

Համավարակով պայմանավորված՝ առողջական վիճակն ինքնին խոցելիության չափանիշ է դիտարկվել 9 գործով[72]: Այդպիսի դեպքերը ներառել են.

- շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, քրոնիկ սրտային

[70] Օրինակ ԿԴ/0015/01/20, ԱՎԴ/0181/01/19, ԱՐԴ/0109/01/19, ՍԴ/0229/01/19, ԵԴ/0687/01/18:

[71] ԵԴ/0364/01/18:

[72] Սակայն միևնույն է պետք է նշել, որ անգամ այսպիսի գործերով դատարանները հաշվի են առել նաև առողջական վիճակից բացի այլ հանգամանքներ՝ կապված, օրինակ, կալանքի հիմքերի, անձի բնութագրի, դրսևորած վարքագծի հետ:

անբավարարություն:[73] Սակայն այլ գործով, որտեղ նույնպես առկա են եղել շնչառական հիվանդություններ, դատարանը հաշվի է առել նաև այն, որ նվազել է մեղադրյալի թաքնվելու վտանգը, և որ այդպիսի պայմաններում անձի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել ազատության զրկման հետ չկապված խափանման միջոցով[74]:

- Օստեոմիելիտ, օստեոնեկրոզ, ինչը հիմք է հանդիսացել անձի՝ ռիսկային խմբի պատկանելիությունը որոշելու համար (գործով այդպիսի միջնորդություն է ներկայացրել նաև մեղադրանքի կողմը)[75]:
- Քրոնիկական լեղաքարային հիվանդություն: Կալկուլյոզ խոլեցիստիտ: Քրոնիկ հեպատիտ Ց, բացի այդ նա հանդիսանում է երրորդ կարգի հաշմանդամ[76]: Սակայն հաշվի է առնվել տևական ժամանակ կալանքի տակ գտնվելու հանգամանքը:
- Զարկերակային բարձր ճնշում, ռեմատոիդ պոլիարթրիդ, արթրոմիալգիա և երիկամների հետ կապված առողջական այլ խնդիրներ[77]: Հաշվի է առնվել նաև կալանքի տակ գտնվելու և նախատեսված պատժի ժամկետները հաշվանցելու արդյունքում տարբերությունը:
- Շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, քրոնիկ սրտային անբավարարություն, քրոնիկ երիկամային հիվանդություններ: Սակայն հաշվի են առնվել նաև համավարակով պայմանավորված՝ կալանքի հիմքերի առկայությունից բխող ռիսկերի նվազումը[78]:

Խափանման միջոցը վերացնելու վերաբերյալ որոշմամբ դատարանի կողմից հաշվի է առնել, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ տրամադրած տեղեկանքի հիման վրա՝ ամբաստանյալը հոսպիտալացված է նույն կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում՝ «Ուղեղի արյան շրջանառության սուր խանգարում հիպերտոնիկ կրիզի ֆոնի վրա հեմոռագիկ ինսուլտի տիպի՝ ներուղեղային հեմատոմայի ձևավորմամբ, սուբարախնոիդալ-ներփորոքային արյունազեզմամբ: Ուղեղի այտուց: Ուղեղային կոմա»: Հիվանդի վիճակը գնահատվում է ծանր, գտնվում է անգիտակից վիճակում» ախտորոշմամբ: Դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու հիմքը՝ դատավարությանը մասնակցող անձանց վրա ազդեցությունը, չեզոքանում է նրա մոտ առաջացած առողջական խնդիրների իրողությամբ: Այլ խոսքով, վերը նկարագրված հիվանդությունների առկայության պայմաններում բացակայում է ամբաստանյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Ուստի Դատարանը, հիմք ընդունելով անձի ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության

[73] ԵԴ/0022/01/19
[74] ԳԴ4/0034/01/19
[75] ԵԴ/0816/01/19
[76] ԵԴ/0263/01/18
[77] ԼԴ1/0007/01/19
[78] ԿԴ3/0032/01/19

իրավունքի առաջնայնությունը, գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը պետք է վերացնել[79]:

Մնացած գործերով անձի առողջական վիճակը դիտարկվել է այլ հանգամանքների համատեքստում՝ գնահատելու կալանավորումը այլ խափանման միջոցով փոխարինելու անհրաժեշտությունը: Օրինակ՝ լյարդի քրոնիկ հիվանդությունների (քրոնիկ հեպատիտներ, քրոնիկ լյարդային անբավարարություն) դեպքում հաշվի են առնվել նաև հանցագործության ծանրության աստիճանը ու ամբաստանյալի անձը, երկար ժամանակ կալանքի տակ գտնվելու բացասական կողմերը,[80] շաքարային դիաբետի դեպքում՝ գործի քննությունը նորմալ ընթացքով շարունակելու ժամանակը կանխորոշելու անորոշությունը, նախաքննության ընթացքում մեղադրյալի դրսևորած վարքագիծը, ընտանիքի սոցիալական վիճակը, խնամքին երկու անչափահաս երեխաների և հիվանդ մոր առկայությունը[81] կամ անձը բնութագրող հատկանիշներ,[82] ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեպքում՝ համավարակի պատճառով նշանակված փորձաքննության արդյունքների ստացման ձգձգումները, մեղսագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը[83]:

Որոշ դեպքերում դատարանները կալանավորման հարցը քննարկելիս առողջական վիճակը դիտարկել են գործող օրենսդրական կարգավորումների լույսի ներքո՝ առանց անդրադարձ կատարելու համավարակին և դրանով առաջացած ռիսկին, թեև պաշտպանը բարձրացրել էր այդ ռիսկի վերաբերյալ պնդումներ[84]: Իրենց եզրահանգումներում դատարանները հարցը դիտարկել են նաև կյանքի իրավունքի և անձին կալանավորված պահելու հանրային շահի հարաբերակցության տեսանկյունից, ինչի արդյունքում կյանքի իրավունքը վեր է գնահատվել առկա հանրային շահից[85]:

Ինչ վերաբերում է տարիքի՝ որպես խոցելի խմբին պատկանելու հիմնավորում, դատարանները 3 գործերով են տարիքը համարել ռիսկային գործոն,[86] մինչդեռ պաշտպանները այս տեսանկյունից պնդումներ են ներկայացրել 5 միջնորդություններով[87]:

Դատարանները որոշ գործերով համավարակին վերաբերող հանգամանքները դիտարկել են ոչ թե անձի՝ խոցելի խմբին պատկանելիությունը հավաստող, այլ համավարակի արդյունքում երկրում ստեղծված իրավիճակից ելնելով կալանքի հիմքերին վերաբերող ռիսկերի նվազեցումը հավաստող հանգամանքներից: Մասնավորապես, որոշ գործերով, որտեղ անձը չի պատկանել ռիսկային խմբի, սակայն ունեցել է առողջական խնդիրներ, հաշվի են առնվել վարակով պայմանավորված ընդհանուր ռիսկերը, նաև երկրում կիրառված սահմանափակումները և այդ պայմաններում կալանքի հիմքերին վերաբերող ռիսկերի

[79] ՇԴ/0046/01/18
[80] ԵԴ/0385/01/18
[81] ՍԴ/0228/01/19
[82] ԿԴ1/0003/01/19
[83] ԵԴ/0430/01/18
[84] ԵՔՐԴ/0341/01/08
[85] ԳԴ4/0034/01/18
[86] ՍԴ/0229/01/19, ԵԴ/0651/01/19, ԵԴ/0269/01/19
[87] ԵՔՐԴ/0341/01/08, ԵԴ/0651/01/19, ԵԴ/0269/01/19, ԳԴ4/0034/01/19, ԼԴ1/0027/01/18

նվազեցումը:[88] Մասնավորապես, նշվել է, որ *«Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում անձանց ազատ տեղաշարժը սահմանափակված է, բոլոր անձինք համարվում են ինքնամեկուսացված, տեղաշարժվել կարող են միայն խիստ անհրաժեշտության դեպքում, իսկ այդ տեղաշարժը վերահսկվում է, դատարանի գնահատմամբ դա էլ իր հերթին է էականորեն նվազեցնում ամբաստանյալների կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու մտավախությունը, հետևաբար անազատության մեջ նրանց պահելու անհրաժեշտությունը ներկայումս բացակայում է»*:[89]

Այլ գործերով հաշվի է առնվել, որ համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակը ազդեցություն է ունենում նշանակված փորձաքննության արդյունքների ստացման ժամկետների վրա՝ հանգեցնելով անորոշության՝ ինչից ելնելով էլ որոշում է կայացվել ընտրել ազատության սահմանափակման հետ չկապված խափանման միջոց:[90]

Ինչպես նշվեց, դատավորները այլընտրանքային խափանման միջոց նշանակելիս հաշվի են առել նաև գործի քննության տևական ընթացքը, իրենց վարույթում գտնվող գործերի քանակը և դրա հետ կապված հերթական դատական նիստերի նշանակման ժամկետների անորոշությունը: Գործերից մեկով դատավորը կատարել է նմանատիպ վերլուծություն.

> *«...կալանավորման [նախկին] որոշմա[ն] հիմնավորումից հետո անցել է 3 ամիս ժամանակ, իսկ գործի քննությունը դեռևս հեռու է ավարտական փուլից ու ներկայումս հնարավոր չէ նույնիսկ մոտավոր կանխորոշել քրեական գործի քննության ժամկետի ավարտը՝ հիմք ընդունելով, որ նիստը նախագահողի վարույթում է 80-ից ավելի քրեական գործ, ինչն իր հերթին բացասաբար է անդրադառնալու գործի քննությունը ողջամիտ ժամկետներում անցկացնելու հանգամանքի վրա և գործով նշանակվելիք դատական նիստը կարող է լինել մոտ մեկ ամիս անց.»*[91]

Այլ դատավորներ, մասնավորապես, ընդգծել են, որ համավարակի դեմ պայքարին ուղղված միջոցառումների հետևանքով ստեղծված պայմաններում «*դատական նիստերը հետաձգվում են, քանի որ դատավարության մասնակիցները, մտահոգված լինելով համավարակի տարածմամբ, չեն ներկայանում դատարան, ինչպես նաև որոշ դեպքերում դատարանն է իր նախաձեռնությամբ հետաձգում դատական նիստերը՝ պայմանավորված դատավարությանը մասնակցող անձի՝ խոցելի խմբին պատկանելու հանգամանքով: Նման պայմաններում հաշվի առնելով այն, որ համավարակի տարածման կանխարգելման միջոցառումների շրջանակներում անձանց ազատ տեղաշարժման սահմանափակումների ամբողջական վերացման ակնկալվող ժամանակի վերաբերյալ մոտավոր կանխատեսումներ հնարավոր չէ կատարել՝ դատարանը գտնում է, որ նաև հնարավոր չէ կանխատեսել, թե երբ հնարավոր կլինի բնականոն ընթացքով շարունակել գործի քննությունը՝ ողջամիտ*

[88] ԵԴ/0620/01/19
[89] ԵԱՔԴ/0167/01/17
[90] Օրինակ ԵԴ/0430/01/18
[91] ՍԴ/0229/01/19

ժամկետում քննել և ավարտել այն»: Այս հանգամանքները, ի թիվս այլ հանգամանքների, հաշվի են առնվել կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելիս[92]:

Վերլուծելով դատարանի կողմից մերժված միջնորդությունների վերաբերյալ դատական ակտերը՝ կարելի է եզրահանգել հետևյալը.

- դատարանների կողմից միջնորդությունները մերժվել են՝ պատճառաբանելով ամբաստանյալի նկատմամբ կալանավորման շարունակական կիրառման հիմքերի առկայությունը,
- կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված ռիսկերը բավարար չեն գնահատվել կալանավորումն այլընտրանքային խափանման միջոցով փոփոխելու համար:

Հիմնավոր կասկածի վերաբերյալ դատարանների եզրահանգումները

Նախքան անդրադառնալը դատարանների հիմնավորումներին կալանավորման շարունակական կիրառման վերաբերյալ, նշենք, որ ուսումնասիրված գործերից 45 դեպքում դատարանը չի անդրադարձել ամբաստանյալի կողմից հանցագործության կատարման ողջամիտ կասկածի առկայությանը: Մասնավորապես, դատական ակտերով նշվել են բացառապես կալանավորման կիրառման համար անձի կողմից հանցագործություն կատարված լինելու հիմնավոր կասկածի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները՝ առանց անդրադառնալու կոնկրետ ամբաստանյալի կողմից հանցագործությունը կատարված լինելու հիմնավոր կասկածի հարցի քննարկմանը և դրա հիմնավորմանը:[93]

Որոշ դեպքերում հիմնավոր կասկածին դատարանի անդրադարձը սահմանափակվել է խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ նախորդ որոշմամբ (որոշումներով) այդ հարցի վերաբերյալ դիտարկումներին հղելով՝ առանց դրան վերստին անդրադառնալու:[94]

«...Հաշվի առնելով ներկայացված միջնորդության բնույթը՝ Դատարանը հիմնավոր կասկածին չի անդրադառնում: Սակայն միևնույն ժամանակ հարկ է նշել, որ դեռևս վերը նշված (կալանավորման հարցի վերաբերյալ նախորդ) որոշումներով արձանագրվել է հիմնավոր կասկածի առկայությունը...»:[95]

«...Դատարանը, անդրադառնալով հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցին, կրկին արձանագրում է, որ քրեական գործը վարույթ ընդունելուց հետո, դատական քննության նշանակելու մասին որոշում կայացնելով, արդեն իսկ հաստատվել է, որ հիմնավոր կասկածն առկա է, քանի որ հակառակ մոտեցման պարագայում կկայացվեր համապատասխան այլ որոշում...»:[96]

---

[92] ՍԴ/0229/01/19
[93] Օրինակ, ՇԴ/0007/01/20; ԵԴ/1242/01/19, ԱՐԴ/0068/01/20
[94] Օրինակ, ԵԴ/0908/01/19, ԵԴ/0144/01/19, ԵԴ/0223/01/19, ԵԴ/0226/01/19, ԵԴ/1231/01/19:
[95] ԵԴ/0223/01/19
[96] ԵԴ/0532/01/19

Արձանագրվել են դեպքեր, երբ դատարանի կողմից ողջամիտ կասկածի առկայությունն արձանագրվել է առանց որևէ հիմնավորման: Դատական ակտով նշվել է, որ չի վերացել հիմնավոր կասկածը, որ ամբաստանյալն առնչության ունի իրեն մեղսագրվող արարքներին, դեպքին:[97]

«*Դատարանն արձանագրում է, որ շարունակվում են առկա լինել ամբաստանյալ […]-ին կալանքի տակ պահելու պայմանները և հիմքերը, մասնավորապես շարունակվում է առկա լինել հիմնավոր կասկած առ այն, որ ամբաստանյալ […] առնչություն ունի իրեն մեղսագրված արարքներին…*»:[98]

Հիմնավոր կասկածի առկայությունը դատարանի կողմից հիմնավորվել է՝ թվարկելով գործում առկա ապացույցները: Մասնավորապես.

«Դատարանն արձանագրել է, որ առկա է հիմնավոր կասկածն առ այն, որ մեղադրյալը առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցանքի կատարմանը, այդ դեպքը, իրադարձությունն առերևույթ համընկնում է նրան մեղսագրվող հանցանքի հատկանիշներին: Դատարանի վերոհիշյալ դիրքորոշման համար հիմք են հանդիսանում՝ կասկածյալի, ապա նաև մեղադրյալի կարգավիճակում նրա խոստովանական ցուցմունքները, վկաների ցուցմունքները, դեպքի վայրի զննության արձանագրությունը, մեղադրյալի բնակարանի խուզարկության արձանագրությունը, հագուստներն առգրավելու մասին արձանագրությունները, հեռախոսային վերծանումները զննելու մասին արձանագրությունը, դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, դատակենսաբանական փորձաքննության եզրակացությունը, դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև դատամատնադրոշմային փորձաքննության եզրակացությունը…»:[99]

«…Դատարանը հաստատված է համարում, որ ներկայացված նյութերում առկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն մեղսագրվող արարքներին: Հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ դատարանի հետևությունը հիմնված է մեղադրյալի մեղայականով ներկայանալու, բանավոր հաղորդում ընդունելու արձանագրությունների, կասկածյալի, տուժողի, անչափահաս վկայի, տուժողի լրացուցիչ, առերես հարցաքննությունների արձանագրությունների, քննչական փորձարարություն կատարելու մասին արձանագրության, փորձագետի եզրակացության, մեղադրյալի հարցաքննության արձանագրության վրա..»:[100]

Որոշ դեպքերում, դատարանը հիմնավոր կասկածի առկայությունը գնահատել է՝ քրեական գործի նյութերի համատեքստում՝ նշելով, որ գործում առկա փաստական տվյալները բավարար են արձանագրելու, որ հիմնավոր կասկածի շեմը հաղթահարված է:[101]

---

[97] Օրինակ, ԼԴ/0063/01/19, ԵԴ/0228/01/20, ԵԴ/0018/01/19:
[98] ԼԴ1/0028/01/17, ԼԴ/0081/01/19
[99] ԱՎԴ2/0022/01/20
[100] ԼԴ/0059/01/18
[101] ԵԴ/0217/01/18

«...Դատարանն արձանագրում է, որ քննվող քրեական գործում առկա փաստական տվյալների զանգվածն այս փուլում, առանց ապացույցների գնահատում և համադրում իրականացնելու և վերջնական եզրահանգման գալու, բավարար են արձանագրելու, որ առկա է հիմնավոր կասկած, որը փաստում է [ամբաստանյալի] հնարավոր կապը՝ առնչությունը, նրան մեղսագրված արարքների հետ...»:[102]

Հիմնավոր կասկածի առկայությունը դատարանի կողմից հիմնավորվել է նաև՝ հղում անելով մեղադրական եզրակացության հիմքում դրված ապացույցներին,[103] մեղադրական եզրակացության հիմքում դրված փաստական տվյալների համակցությամբ:[104]

«...Դատարանը նախ արձանագրում է, որ մեղադրյալին մեղսագրված արարքի կատարմանը նրա առնչվելու վերաբերյալ կասկածը պահպանվել է և շարունակում է մնալ հիմնավոր, ինչի մասին է վկայում մեղադրական եզրակացության հիմքում դրված փաստական տվյալների համակցությունը: Դատարանը փաստում է, որ այդպիսի փաստական տվյալները բավարար են ծառայում դատավարության սույն փուլում մեղադրյալի կողմից ենթադրյալ հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության մասին հետևության գալու համար: Այդ համատեքստում Դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է և կիրառելի է ոչ թե հիմնավոր կասկածը, այլ անձի մեղքը հավաստելիս...»:[105]

Կալանավորման շարունակական կիրառման հիմնավորումները

Ուսումնասիրված դատական ակտերում ամբաստանյալների նկատմամբ կալանքի կիրառման շարունակականության անհրաժեշտությունը դատարանների կողմից հիմնականում հիմնավորվել է ընդհանուր ձևակերպումներով, վերացական և կրկնվող հիմնավորումներով:

Որոշ գործերով կալանավորման շարունակական կիրառման անհրաժեշտությունը վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հիմքի պայմաններում պատճառաբանվել է առաջադրված մեղադրանքի հանրային վտանգավորությամբ և հանցագործության համար նախատեսված պատժի ծանրությամբ:

Օրինակ, «անդրադառնալով քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու մտավախությանը, ապա Դատարանը իրատեսական է համարում նշված հիմքի առկայությունը՝ ելնելով այն հանգամանքից, որ ամբաստանյալը մեղադրվում է կյանքի և առողջության դեմ ուղղված դիտավորությամբ կատարվող առանձնապես ծանր հանցանք

[102] ԵԴ/0532/01/19
[103] ՇԴ3/0043/01/17
[104] Օրինակ, ՍԴ/0001/01/19, ԱՐԴ/0087/01/20, ՇԴ/0068/01/19
[105] ԱՐԴ/0087/01/20:

կատարելու մեջ, որի համար պատիժ է նախատեսված բացառապես ազատազրկման ձևով: Հետևաբար, Դատարանը հիմնավորված է համարում այն մտավախությունը, որ ամբաստանյալը կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից»:[106]

«Դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով ենթադրյալ ծանր հանցագործությունների կատարում, որի համար ազատազրկման ձևով պատիժ է նախատեսված և գտել է, որ տվյալ դեպքում մեղսագրվող արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը նշանակություն ունեն մեղադրյալի հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում: Հետևաբար, դատարանը հիմնավոր է համարում, որ մեղադրանքով սպառնացող պատժի խստությամբ պայմանավորված՝ նա կարող է դիմել փախուստի և թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: *Նախկինում կայացրած այլ որոշումներով դատարանը նշել է, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Ընդունված որոշմամբ դատարանն արձանագրում է, որ շարունակվում են առկա լինել ամբաստանյալին կալանքի տակ պահելու պայմանները և հիմքերը: Հաշվի առնելով ամբաստանյալին մեղսագրվող արարքների բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, գտնում է, որ շարունակվում է պահպանվել և մեծ է ազատության մեջ մնալու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու միջոցով գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը*»:[107]

«Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու առնչությամբ Դատարանը փաստում է, որ գործի քննության տվյալ փուլում բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ամբաստանյալը, հատկապես մեղադրվելով բազմադրվագ ծանր հանցագործություններ կատարելու մեջ հայտնելով ազատության մեջ, կարող է թաքնվել քննությունից»:[108]

Դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով գործի քննությանը խոչընդոտելու հիմքը դատարանների կողմից պատճառաբանվել է վերացականորեն՝ առանց որևէ փաստական տվյալների հիման վրա:

Օրինակ, «Դատարանի համար ընդունելի է այն մտավախությունը, որ ամբաստանյալը, մնալով ազատության մեջ, կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով և թաքնվել վարույթն իրականացնող մարմնից: Թեև նախաքննությունն ավարտվել է, որի ժամանակ հարցաքննվել են դատակոչի ցուցակում ընդգրկված վկաները, տուժողը, սակայն դատական քննությունը նոր պետք է սկսվի և քրեական գործի քննության ներկա փուլում ամբաստանյալը դեռևս կարող է քրեական դատավարությանը մասնակցող,

[106] ՍԴ/0001/01/19
[107] ԼԴ/0063/01/19
[108] ԿԴ3/0046/01/18

այդ թվում՝ նաև դեռևս դատարանում չհարցաքննված անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով խոչընդոտել քրեական գործի քննությանը»:[109]

Դատարանը գործի քննության սույն փուլում, երբ դատաքննությունը դեռևս չի ավարտվել, կան գործով չհարցաքննված վկաներ, իրատեսական է համարում ամբաստանյալի կողմից ազատության մեջ հայտնվելու պայմաններում դատավարության մասնակիցների վրա՝ մասնավորապես դեռևս դատարանում չհարցաքննված վկաների վրա ապօրինի ներազդեցություն ցուցաբերելու հավանականությունը:[110]

Ծեծի և հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու մեջ մեղադրվող ամբաստանյալի առնչությամբ կալանավորման հիմքերի հիմնավորումներում դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի և ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի բնույթը, դրանց վտանգավորության աստիճանը դասվում են, համապատասխանաբար, ոչ մեծ ծանրության և ծանր հանցագործությունների շարքին, որոնցից մեկի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, իսկ անձին մեղսագրվող հանցանքի ծանրությունն ու ակնկալվող պատժի խստությունը էական նշանակություն ունի ազատության մեջ գտնվող մեղադրյալի վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, ինչպես նաև մեղադրյալը, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարության մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով: Այն հիմքը, որ ամբաստանյալը ազատության մեջ մնալու պայմաններում կարող է խոչընդոտել գործի քննությանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով հիմնավորվում է այն հանգամանքով, որ գործով տուժող հանդիսանում է ամբաստանյալի նախկին կինը, իսկ անչափահաս տուժողներ հանդիսանում են նրա երեխաները, որոնց հայտնի է քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ: *Դատարանը փաստում է նաև, որ գործով վկաների և տուժողների հարցաքննված լինելու պայմաններում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով խոչընդոտելու վտանգը նվազել է, սակայն, այնուամենայնիվ, դեռ առկա է»:*[111]

Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելը հիմնականում հիմնավորվում է անձին առաջադրված բազմադրվագ հանցագործությունների կատարմամբ:

«Դատարանն արձանագրում է, որ կալանավորման հիմքերը կրկին քննարկելիս ընդունելի է այն մտավախությունը, որ [...] մնալով ազատության մեջ կարող է կատարել օրենքով չթույլատրված արարք, քանի որ վերջինիս 2019 թվականի մարտի 1-ից մինչև հունիսի 24-ն ընկած ժամանակահատվածում մեղսագրվում է չորս դրվագ ենթադրյալ, նույնասեռ արարքներ, որի պայմաններում մեծ է հավանականությունը, որ վերջինս

[109] ԵԴ/0228/01/20
[110] ԿԴ3/0046/01/18
[111] ՇԴ/0067/01/19

ազատության մեջ հայտնվելով հնարավոր է քրեական օրենքով չթույլատրված արարք կատարի»:[112]

Մեկ այլ գործով, դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալի նկատմամբ նախկինում կայացած որոշմամբ կալանավորման հիմք է դիտվել քրեական օրենքով չթույլատրված նոր արարքի կատարման հավանականությունը, որը դատարանի կողմից հիմնավորվել է նախաքննության ընթացքում ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց (ծնողի հսկողությանը հանձնելու) ընտրվելուց հետո նրա կողմից կրկին առերևույթ հանցավոր արարքներ (չորս առանձին դրվագ գողություններ) կատարելը, նրան մեղսագրված հանցավոր արարքների նույնասեռ, նույնաբնույթ լինելը, ինչպես նաև նախկինում այդպիսի արարքների կատարման համար դատապարտված լինելը: Ուսումնասիրելով գործի նյութերը՝ Դատարանն արձանագրում է, որ սույն հիմքը շարունակում է պահպանվել և կալանավորման վերաբերյալ նախորդ որոշման կայացումից հետո ի հայտ չեն եկել իրենց բնույթով ծանրակշիռ այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են նվազեցնել կամ չեզոքացնել կալանավորման համապատասխան հիմքի հնարավոր դրսևորման հավանականությունը:[113]

Մեկ այլ գործով դատարանի այն հետևությունը, որ ամբաստանյալը, ազատության մեջ մնալով, կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, հիմնավորվել է այն հանգամանքով, որ ամբաստանյալը նախկինում դատապարտվել է համասեռ և այլ հանցագործությունների կատարելու համար և ներկայում նրա դատվածությունը համարում է չմարված:[114]

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 38-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների) մեջ մեղադրվող ամբաստանյալի առնչությամբ կայացված որոշմամբ դատարանն արձանագրել է, որ շարունակում են առկա լինել կալանավորում կիրառելու հիմքերը, մասնավորապես՝ առկա է գործի քննությանը՝ դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով խոչընդոտելու, ինչպես նաև քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու հիմնավոր ռիսկ, ինչն էլ մեղսագրվող հանցագործությունների բնույթի, հանրային վտանգավորության աստիճանի, մեղադրյալի անձի, հանցագործության կատարման եղանակի հետ միասին մեծացնում է հավանականությունը հանգելու այն հետևության, որ գտնվելով ազատության մեջ՝ ամբաստանյալը կարող է խոչընդոտել դատարանում գործի քննությանը՝ դատակոչված վկաների վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով, *ինչպես նաև կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք*»[115]: Տվյալ դեպքում, քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու հիմքը որևէ կերպ չի հիմնավորվել:

---

[112] ԵԴ/1231/01/19
[113] ԱՐԴ/0118/01/19
[114] ՇԴ/0067/01/19
[115] ԿԴ/0037/01/20

Ուսումնասիրված դատական ակտերով դատարանների կողմից հիմնականում վկայակոչվել են ամբաստանյալի նկատմամբ նախկինում կայացված որոշումներով կալանավորման կիրառման հիմնավորումները՝ նշելով, որ դրանք չեն վերացել կամ չեն նվազել: Այդպիսի գործերից դատարանների հիմնավորումները հանգել են հետևյալին.

«*Մեջբերված իրավադրույթների լույսի ներքո վերլուծելով սույն քրեական գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամբաստանյալի նկատմամբ քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան և գործը գտնվում է դատաքննության փուլում, Դատարանը, հիմք ընդունելով անմեղության կանխավարկածի սկզբունքի առաջնայնությունը, արձանագրում է, որ ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու պայմաններն առերևույթ առկա են: Անդրադառնալով ամբաստանյալի կալանավորման հիմքերին՝ Դատարանը գտնում է, որ տվյալ փուլում շարունակում է առկա լինել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ մատնանշած հիմքերը*»[116]:

«*Անդրադառնալով ամբաստանյալի կալանավորման հիմքերին՝ Դատարանը գտնում է, որ տվյալ փուլում շարունակում են առկա լինել Դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ մատնանշած հիմքերը, մասնավորապես՝ «(...) բարձր է հավանականությունն առ այն, որ ամբաստանյալը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Վերոգրյալի հետ մեկտեղ՝ Դատարանը, հիմք ընդունելով սույն գործի նյութերը, փաստում է, որ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառելու պայմաններում ամբաստանյալը կարող է անօրինական ազդեցություն ունենալ դատավարությանը մասնակցող անձանց վրա կամ այլ կերպ խոչընդոտել գործի քննությանը, ինչպես նաև կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք (…)*»:[117]

«Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի համար հիմք հանդիսացած՝ կալանավորման պայմաններն ու հիմքերը չեն վերացել և քանակական ու որակական տեսանկյունից, առնվազն, չեն նվազել: Մասնավորապես, ըստ քրեական գործի փաստական տվյալների, մեղադրվում է ծանր հանցագործություն կատարելու մեջ, որի համար պատիժ նախատեսված է ազատազրկում 3-7 տարի ժամկետով, և սպառնացող հնարավոր պատժի խստությունը, ինչպես նաև մեղադրյալի հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը հիմք է տալիս հավանական համարելու, որ առանց կալանավորման կամ համաժեք երաշխիքի նա կարող է թաքնվելու վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը՝ անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով կամ այլ ճանապարհով»:[118]

---

[116] ԼԴ1/0029/01/16
[117] ՇԴ/0029/01/17
[118] ԱՎԴ/0035/01/20

Ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցի կիրառումը մերժելու հիմնավորումներ

Ուսումնասիրված գործերով դատարանների կողմից գրավի կիրառումը մերժելու մասին հիմնավորումը, որպես կանոն, եղել է, որ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցի կիրառումը չի կարող երաշխավորել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը:

Որպես օրինակներ կարելի է դիտարկել դատարանների հետևյալ հիմնավորումները.

«*Դատարանը գտնում է, որ գրավ խափանման միջոցով, ողջամտորեն, հնարավոր չէ ապահովել ամբաստանյալ […] հետագա պատշաճ վարքագիծը դատաքննության ընթացքում, հետևաբար՝ ամբաստանյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պետք է թողնել անփոփոխ, իսկ նրա պաշտպանի միջնորդությունը՝ մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանավորում խափանման միջոցը գրավ խափանման միջոցով փոխարինելու մասին՝ մերժել*»[119]:

«*Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը չհեռանալու մասին ստորագրությամբ փոխելուն, ապա այս փուլում նման հիմքեր առկա չեն և այն չի կարող ապահովել նրա հետագա պատշաճ վարքագիծը: […] ներկա պահին խափանման միջոց կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու բավարար հիմքեր առկա չեն, այլընտրանքային երաշխիքն ի զորու չէ կանխել ամբաստանյալի ոչ իրավաչափ վարքագիծը նրան ազատ արձակելու դեպքում, և առկա է ողջամիտ ենթադրություն, որ նա ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, կատարել օրենքով չթույլատրված արարք, իսկ նման ենթադրություններ կատարելու համար Դատարանը հիմնվում է քրեական գործի փաստերի, ինչպես նաև կալանքի հիմքերի առկայության վերաբերյալ հանգամանքների վրա*»[120]:

«*Դատարանն արձանագրում է, որ գրավի կիրառումը տվյալ դեպքում չի կարող չեզոքացնել կալանավորման հիմքի առկայությունը: Նման եզրահանգում կատարելիս դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ 09.03.2020թ. որոշմամբ ամբաստանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը թողնվել է անփոփոխ, մինչդեռ սույն գործի քննության ընթացքում ի հայտ չեն եկել այնպիսի փաստական տվյալներ, որոնց առկայության դեպքում հնարավոր կլիներ արձանագրելու, որ սույն փուլում գրավն ի զորու է ապահովել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը*»[121]:

---

[119] ԱՎԴ/0035/01/20
[120] ԵԴ/0539/01/19
[121] ԵԴ/0903/01/18

Կորոնավիրուսային հիվանդության համաճարակով պայմանավորված իրավիճակի ազդեցությունն անձի կալանքի վրա

Կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված՝ կալանավորումը այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունները մերժելու վերաբերյալ որոշումներում դատարանների հիմնավորումները հիմնականում կրկնում են մեղադրողների փաստարկները: Դատարանների հիմնական պատճառաբանությունները եղել են հետևյալը,

Չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ կամ փաստեր, որ ամբաստանյալը գտնվում է կորոնավիրուսային հիվանդության խոցելի խմբում՝ տարիքով կամ հիվանդությամբ պայմանավորված:

Դատարանների հիմնական փաստարկն է եղել, որ չեն ներկայացվել այնպիսի բժշկական տվյալներ, որոնք կարող են վկայել ամբաստանյալի կողմից անազատության մեջ գտնվելու անհնարինության և/կամ առավել խոցելի խմբում գտնվելու մասին[122]: Ներկայացված չեն եղել ամբաստանյալի առողջության վերաբերյալ այնպիսի փաստական տվյալներ, որոնցով բավարար կլիներ փաստելու, որ քրեակատարողական հիմնարկում գտնվելու դեպքում ամբաստանյալի առողջությանը իրական վտանգ կարող է սպառնալ[123]:

Այլ գործով ամբաստանյալի առողջական վիճակի վերաբերյալ ներկայացված փաստաթուղթը դատարանի համար բավարար հիմք չի հանդիսացել եզրահանգելու, որ նրա մոտ առկա է այնպիսի հիվանդություն, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ կիրառված խափանման միջոցը կրելուն: Հետևաբար դատարանը չի ընդունել ամբաստանյալի՝ խոցելի խմբում գտնվելու վերաբերյալ պաշտպանության կողմի փաստարկներն այն մասին, որ ամբաստանյալն ունի մի շարք լուրջ ու քրոնիկ հիվանդություններ, ինչպես նաև նրա մոտ առկա է հրազենային վնասվածք, որի համար պետք է վիրահատություն, որը բացառապես հնարավոր է ազատության մեջ գտնվելու դեպքում, և կորոնավիրուսով վարակվելու դեպքում հետևանքները կլինեն անդառնալի[124]:

Այսպես, պաշտպանության կողմից ներկայացված միջնորդությամբ փաստարկվել է, որ «ամբաստանյալն ունի սրտանոթային հիվանդություն, բարձր խոլեստերին, գլխանոթային հիվանդություն, որի հետևանքով մասնակի կորցրել է լսողությունը: Շուրջ երեք տարի է գտնվում է անազատության մեջ և դեռ հայտնի չէ թե երբ կավարտվի գործի դատական քննությունը: Նա գտնվում է ռիսկային գոտում, և կորոնավիրուսային հիվանդությամբ վարակումը կհանգեցնի ծանր հետևանքների»: Դատարանը, անդրադառնալով նշված փաստարկներին, «*մասնավորապես կորոնավիրուսի տարածման վտանգին՝ քրեակատարողական հիմնարկություններում, իր պաշտպանյալի առողջական վիճակը, մյուս հանգամանքները, գտնում է, որ այդպիսին հիմնազուրկ է՝ նկատի ունենալով այն*

[122] ԵԴ/0123/01/20
[123] ԵԴ/0903/01/18, ԵԴ/1231/01/19:
[124] ԿԴ/0037/01/20

հանգամանքը, որ ամբաստանյալը ռիսկային և կամ խոցելի խմբում չէ, ուստի և նրա նկատմամբ խափանման միջոցը փոխելու հիմքեր չկան»[125]:

Հիմք ընդունելով ամբաստանյալի մոտ առկա հիվանդությունները՝ «էռոզիվ ռեֆլյուքս էզոֆագիտ, արտահայտված գաստրիտ, բուբլիտ, կոճղեղի խոց, հեպատոմեգալիա, լյարդի ճարպային փոփոխություններ»՝ պաշտպանի կողմից փաստվել է, որ այդ հիվանդությունների առկայության դեպքում կորոնավիրուսը առավել մեծ վտանգ է ներկայացնում: Դատարանը փաստել է, որ «*ամբաստանյալի մոտ առկա հիվանդությունները դեռևս չեն վկայում այն մասին, որ նա գտնվում է այն խոցելի խմբում կամ տառապում է այնպիսի քրոնիկ հիվանդություններով, ինչի պայմաններում Կորոնավիրուսը /COVID-19/ կարող է ունենալ անդառնալի հետևանքներ: Բացի այդ, չկա հաստատված որևէ պաշտոնական տվյալ այն մասին, որ ՀՀ քրեակատարողական հիմնարկներում՝ դատապարտյալների կամ կալանավորված անձանց շրջանակում կան Կորոնավիրուսի /COVID-19/ հաստատված դեպքեր, ուստի, ամբաստանյալի՝ ՔԿՀ-ում գտնվելը չի կարող վկայել նրա նկատմամբ անմարդկային վերաբերմունքի կամ խոշտանգման ենթարկվելու, ինչպես նաև այդ հիվանդությամբ վարակվելու իրական սպառնալիքի մասին*»[126]:

Միաժամանակ, արձանագրվել են դատական ակտեր, որոնցում դատարանների կողմից անդրադարձ չի կատարվել պաշտպանության կողմի միջնորդությամբ ներկայացված ամբաստանյալի առողջական վիճակի վերաբերյալ պնդումներին: Մասնավորապես, ուսումնասիրված գործերից մեկով պաշտպանի կողմից ներկայացվել է, որ ամբաստանյալն ունի քրոնիկական հիվանդություններ՝ սրտի իշեմիկ հիվանդություն, լարման ստենոկարդիա 3-րդ ֆունկցիոնալ դաս, Զարկերակային հիպերտենզիա 2-3o, 4-րդ շրջան, 2-րդ ռիսկի: Ողնաշարի պարանոցային հատվածի դեգեներատիվ, դիստրոֆիկ փոփոխություններ, վերտեբրոբազիլյար պարոքսիզմներով, շագանակագեղձի գերաճ, ադենոմա, վիճակ խոլեցիստէկտոմիայից հետո ախտորոշմամբ, 62 տարեկան է, ինչը համարվում է COVID-19 հիվանդության բարձր ռիսկային խումբ: Բազմիցս դիմել է քրեակատարողական հիմնարկի բուժմաս, ստացել համապատասխան ստացիոնար ու ամբուլատոր բուժում, գտնվում է բուժմասի առավել ուշադրության, դինամիկ հսկողության տակ, ներառված է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի հատկապես ուշադրության արժանի, տարիքային բարձր խմբի հիվանդների ցուցակում»: Մինչդեռ դատարանի կողմից որևէ անդրադարձ չի կատարվել պաշտպանի փաստարկին առողջական վիճակով և տարիքով պայմանավորված կորոնավիրուսային հիվանդության ռիսկային խմբում գտնվելու վերաբերյալ, Դատարանի կողմից վերացականորեն նշվել է, որ ամբաստանյալը ներկայումս գտնվում է ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, որտեղ չկա նոր տիպի Կորոնավիրուսի (COVID-19) հիվանդությամբ պայմանավորված պաշտոնապես հայտարարված համաճարակային իրավիճակ: Բացի այդ, չկան տեղեկություններ ՀՀ ԱՆ «Արմավիր»

[125] ԵԴ/0328/01/18
[126] ԵԴ/0532/01/19

քրեակատարողական հիմնարկի գերբնակեցվածության վերաբերյալ: Տվյալ պայմաններում դատարանը գտնում է, որ ինքնին համաճարակը հիմք չէ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ անազատության հետ չկապված որևէ այլ խափանման միջոցով փոխելու համար:[127]

Մեկ այլ գործով սպանության կատարման մեջ մեղադրվող ամբաստանյալի կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությունը հիմնավորվել էր նրանով, որ ամբաստանյալի մոտ ախորոշվել էին սրտի իշեմիկ հիվանդություն, ստենոկարդիա, նեյրոցիրկուլյատորդիստոնիա կարդիալ տիպ, կարճատեսություն, բլեֆարոկոնյուկտիվիտ, հերպես, և սրտի հետ կապված հինանդությունների բնույթն այնպիսին էր, որ նա չէր կարող պահվել անազատության մեջ, իսկ հատկապես նոր կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակում նրան ախտորոշված հիվանդություններով տառապող անձինք գտնվում են ռիսկային գոտում և ամբաստանյալի հետագա գտնվելը ՔԿՀ-ում վտանգավոր է վերջինիս կյանքի համար: Դատական ակտով, սակայն, որևէ անդրադարձ անձի հիվանդություններին և այդ ուժով խոցելի խմբում գտնվելու հարցին անդրադարձ չի եղել: Դատական ակտի հիմնավորումը սահմանափակվել է բացառապես հետևյալով. «*ամբաստանյալը գտնվում է ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, որտեղ չկա նոր տիպի Կորոնավիրուսի (COVID-19) հիվանդությամբ պայմանավորված պաշտոնապես հայտարարված համաճարակային իրավիճակ: Բացի այդ, չկան տեղեկություններ ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի գերբնակեցվածության վերաբերյալ*: Հիմք ընդունելով նշվածը և հաշվի առնելով ԽԿԿ 2020 թվականի մարտի 20-ի խորհրդատվական բնույթի զեկույցը Դատարանն արձանագրում է, որ ձեռք չեն բերվել այնպիսի փաստական տվյալներ, որոնք նվազեցնում կամ չեզոքացնում են Դատարանի կողմից նախկինում արձանագրված՝ ամբաստանյալի կալանքի տակ պահելու հիմքերը, ուստի ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը վերացնելու կամ փոխելու փաստական հիմքեր չկան, և տվյալ փուլում, գործի հանգամանքներից ելնելով, խափանման միջոց գրավի կիրառումը չի կարող ապահովել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը»[128]:

Մերժված գործերով, ի թիվս այլոց, բարձրացվել են ամբաստանյալների հետևյալ առողջական խնդիրները.

- Զարկերակային հիպերթենզիա կրիզային էպիզոդներ: Նեվրասթենիա[129],
- Ս.Ի.Հ, լարվածության ստենոկարդիա ՖԴ II, զարկերակային գերճնշում 1-2 աստիճան, Խ.Ս.Ա. 2-րդ աստիճան (NYHA) աթերոսկլերոտիկ կարդիոսկլերոզ: Վիճակ կորոնար անոթների ստենտավորումից հետո: OD- վիճակ ակնագնդի թափանցող վնասվածքից հետո: OU-սկսվող կատարակտա,[130]

---

[127] ՇԴ2/0042/01/19

[128] ԼԴ1/0029/01/16: Անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարվել է և ամբաստանյալի նկատմամբ կիրառվել է 3000000 ՀՀ դրամ չափով գրավ:

[129] ԿԴ3/0061/01/17

[130] ԼԴ1/0028/01/17

- ՈՒԱՇՍԽ /իշեմիկ տիպի/ աջ կիսագնդի գագաթ-քունքային շրջանում գլխուղեղի զոնայի առկայություն /հետիշեմիկ փոփոխություն/, հիպերտոնիկ հիվանդություն՝ կրիզային էպիզոդներով: ՍԻՆ. Անկայուն ստենոկարդիա, առուտենովեգիտատիվ համախտանիշ, քրոնիկ բրոնխիտ, ալիմենտար գաստրիտ, քրոնիկ պրոստատիտ[131],
- Հեպատիտ C[132],
- Զարկերակային հիպերտենզիա II, IIԱ: Քրոնիկական օբստրուկտիվ բրոնխիտ: Շնչառական անբավարարություն II աստիճան: Դորսալգիա, միջկողային նևրալգիա, ցավային համախտանիշով[133],
- Ամբաստանյալի՝ հետվիրահատական շրջանից հետո ոչ լավ առողջական վիճակը[134] :
- Մեկ այլ գործով, պաշտպանության կողմից ներկայացվել է, որ անձն ունեցել է զինվորական ծառայության հետ անհամատեղելի հիվանդություն, ինչի բերումով ազատվել է զինվորական ծառայությունից և ներկայումս տևական ժամանակ անազատության մեջ գտնվելը բավականին ենթադրություն է տալիս, որ ամբաստանյալի իմունիտետը համապատասխան սնունդ, դեղորայք չստանալու բերումով կարող է ընկած լինել[135]:
- Այլ միջնորդությունների հիմքում դրվել են անձի հետևյալ հիվանդությունները՝ հայմորիտ,[136] շաքարային դիաբետ, քրոնիկ լյարդային անբավարարությունը, ենթաստամոքսային գեղձի ախտահարում[137]:

Որոշ դատական ակտերում նշվել է, որ ամբաստանյալն ունի առողջական խնդիրներ, վատառողջ է՝ առանց կոնկրետացնելու անձի հիվանդությունները:

Դատարանների ամենատարածված փաստարկներից է, որ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում, այդ թվում՝ այն քրեակատարողական հիմնարկում, որտեղ պահվում է ամբաստանյալը, դատապարտյալների կամ կալանավորված անձանց շրջանում կորոնավիրուսի հաստատված դեպքեր չեն արձանագրվել:

Օրինակ, դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալի պահման վայրում՝ ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում, նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի հայտնաբերման դեպքեր չեն արձանագրվել, բացի այդ ՀՀ-ում հայտարարված է արտակարգ դրություն, քրեակատարողական հիմնարկում կիրառված են սահմանափակումներ, հետևաբար՝ նման պայմաններում նրա մոտ նոր կորոնավիրուսով (COVID-19) վարակվելու ռիսկերը խիստ ցածր են[138]: Կամ մեկ ալ գործով վկայակոչվել է, որ ամբաստանյալը գտնվում է ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում, որտեղ չկա նոր տիպի Կորոնավիրուսի (COVID-19) հիվանդությամբ պայմանավորված պաշտոնապես

---

[131] ԿԴ3/0046/01/18
[132] ԿԴ3/0001/01/18; ԱՎԴ/0125/01/19
[133] ԼԴ/0015/01/17
[134] ԵԴ/0779/01/19
[135] ԵԴ/0144/01/19
[136] ԵԴ/0002/01/20
[137] ՏԴ2/0029/01/19
[138] ԿԴ3/0011/01/20

հայտարարված համաճարակային իրավիճակ (Դատարանին հայտնի չէ նաև տվյալ քրեակատարողական հիմնարկում արձանագրված՝ վարակման որևէ դեպք):[139]

Գործերից մեկով պաշտպանության կողմի միջնորդությամբ որպես փաստարկ ներկայացվել են ՀՀ-ում տիրող կորոնավիրուսային հիվանդության տարածման տեմպերը, դրա կանխարգելմանն ուղղված միջոցառումները, սահմանափակումները, ՀՀ ԱՆ Վարդաշեն ՔԿՀ-ում դեպքերի արձանագրումը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրի կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերը, որոնց ի պատասխան՝ դատարանի կողմից պատճառաբանվել է, որ ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում, որտեղ գտնվում է ամբաստանյալը, առկա չէ կորոնավիրուսային հիվանդությունը, վարակվածներ չկան և պաշտպանի կողմից ներկայացված փաստարկները հիմք չեն տալիս, որպեսզի ամբաստանյալի նկատմամբ կիրառվի այլ խափանման միջոց[140]:

Պաշտպանության կողմի փաստարկներին առ այն, որ քրեակատարողական հիմնարկների գերբնակեցումը կորոնավիրուսային հիվանդության տարածման գործոն է, դատարանները հիմնականում արձագանքել են, որ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում առկա չէ գերբեռնվածություն:

Ի դեպ, քրեակատարողական հիմնարկներում գերբեռնվածության բացակայության մասին դատարանի հիմնավորումներում առանձնացել են հետևյալ մոտեցումները. մի դեպքում գերբեռնվածության մասին տեղեկությունների բացակայությունը դատարանը պայմանավորել է պաշտպանության կողմի կողմից նման տվյալների չներկայացմամբ[141], այլ դեպքերում, դատարանն արձանագրել է, որ չկան տեղեկություններ քրեակատարողական հիմնարկի գերբնակեցվածության վերաբերյալ (ավելին՝ Եվրոպայի Խորհրդի՝ 2019 թվականի տարեկան քրեական վիճակագրության զեկույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկների բանտային բնակչության խտությունը կազմել է 42.2%)[142]:

Նույն կերպ, մեկ այլ գործով դատարանն արձանագրել է, որ «ՀՀ քրեակատարողական հիմնարկների գերբեռնված լինելու և դրանով ազատությունից զրկված անձանց շրջանում համավարակի տարածման համար նպաստող հանգամանք լինելու՝ պաշտպանի պնդմանն ի պատասխան դատարանը նշել է, որ «*ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում 07.04.2020թ. տեղադրված հայտարարության համաձայն՝ Հայաստանի ՔԿՀ-ների ընդհանուր լրակազմը 5346 է, սակայն դրանցում բանտային բնակչության խտությունը կազմում է 41.7%: Այլ խոսքով՝ ի տարբերություն այլ երկրների, ՀՀ-ում ՔԿՀ-ների գերծանրաբեռնվածություն առկա չէ և միանգամայն հակառակը: Հետևաբար, իմաստազուրկ է փաստել, որ բանտային խտության չափազանց բարձր լինելու հետևանքով մեծ է վտանգն առ այն, որ նոր Կորոնավիրուսն /COVID-19/ ավելի արագ տարածում կարող է գտնել*»:[143]

---

[139] ՇԴ/0021/01/20
[140] ԿԴ3/0045/01/19
[141] ԱՎԴ/0081/01/19
[142] ՇԴ/0021/01/20
[143] ԵԴ/0532/01/19

Անդրադառնալով դատական նիստերի ձգձգումների, դատական քննությունը ողջամիտ ժամկետներում իրականացնելու խոչընդոտների առկայության մասին փաստարկներին՝ դատարանների կողմից նշվել է, որ համավարակով և արտակարգ դրությամբ պայմանավորված տեղաշարժման ազատության սահմանափակումների պայմաններում ողջամտորեն հնարավոր է կանխորոշել դատական նիստերի ժամկետները և դրանց անցկացման հնարավորությունը:

Դատարանների այս փաստարկը հիմնավորվել է ՀՀ պարետի 2020թ. մայիսի 3-ի որոշմամբ երկրում կիրառված սահմանափակումները թուլացմամբ, այդ թվում՝ վերացվել է ազատ տեղաշարժի սահմանափակման վերացմամբ, իսկ արտակարգ դրությունը հայտարարված է մինչև ս.թ. մայիսի 15-ը: *«Այսինքն, այսուհետ ողջամտորեն հնարավոր է կանխորոշել հաջորդ դատական նիստերի ժամկետները և դրանց անցկացման հնարավորությունը, դեռ ավելին, սույն օրը նշանակված էր դատական նիստ, ինչն էլ կողմերի մասնակցությամբ տեղի է ունեցել: Ավելին, դատարանն արձանագրել է, որ համավարակի հնարավոր խորացման և դրա հետևանքով դատական նիստերի կրկին հետաձգման պարագայում, Դատարանը որևէ կերպ կաշկանդված չէ ինչպես կողմի միջնորդությամբ, այնպես էլ իր նախաձեռնությամբ քննարկել կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու հնարավորության հարցը»*[144]:

Որոշ դեպքերում նշել են, որ դատական նիստերի օբյեկտիվ պատճառներով տևական ժամանակ չկայանալու դեպքում դատարանը կարող է կրկին քննարկման առարկա դարձնել խափանման միջոցի հարցը[145], ինչպես դատավարության կողմերի միջնորդությամբ, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ[146]: Մինչդեռ միևնույն ժամանակ պետք է նշել, որ բավարարված միջնորդությունների վերաբերյալ կայացված որոշումներում մի շարք դատարավորներ ընդունել են նման պնդումները՝ գտնելով, որ համավարակի արդյունքում առաջացել են նիստերի նշանակման և անցկացման ժամկետների անորոշություններ, ինչով պայմանավորված՝ ընտրել են ազատազրկման հետ չկապված խափանման միջոց:

Գործերից մեկով, չնայած դատարանն արձանագրել է, որ հաշվի առնելով Կորոնավիրուսի (COVID-19) համավարակով ստեղծված իրավիճակը, ինչպես նաև, որ ստեղծված վիճակից ելնելով՝ առնվազն հնարավոր չէ գործնականում նշանակել ու կանխորոշել հաջորդ դատական նիստի օրը կամ մոտավոր ժամկետները՝ այդուհանդերձ դատարանը փաստել է, որ առկա են ամբաստանյալի նկատմամբ կալանավորում կիրառելու պայմաններն ու հիմքերը, ինչպես նաև իրավախախտմանն առնչություն ունենալու հիմնավոր կասկածը, որպիսի պայմաններում գտել է, որ գրավի կիրառումը չի կարող թույլատրելի ճանաչվել[147]:

Արձանագրվել են նաև դատական ակտեր, որոնցով դատարանի կողմից համաճարակային իրավիճակին վերաբերող փաստարկներին ի պատասխան նշվել է, որ ՀՀ-

---

[144] ԵԴ/0123/01/20, ԵԴ/0018/01/19
[145] ԵԴ/0903/01/18
[146] ԵԴ/0427/01/18
[147] ԵԴ/0808/01/19

ում իշխանությունների կողմից ձեռնարկվող միջոցառումների շարքում նախատեսված են նաև համավարակի տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների իրականացում նաև քրեակատարողական հիմնարկներում[148], ինչպես նաև հղում կատարելով ազատությունից զրկված անձի կյանքի և առողջության պահպանման՝ պետության պոզիտիվ պարտականության և դրա ապահովման ուղղությամբ պատշաճ հսկողությանը, դատարանը գտել է, որ դա «որոշակիորեն կայուն երաշխիք է անձի առողջությունն ապահովված լինելու հարցում» այն դեպքերում, երբ ազատությունից զրկելն անհրաժեշտ է[149]:

ԽԿԿ զեկույցի կիրառման առնչությամբ դատարանների հիմնական փաստարկն էր, որ այն խորհրդատվական բնույթի է, պարտադիր չէ և չի կարող կիրառվել յուրաքանչյուր դեպքում: ԽԿԿ զեկույցն ինքնին չի կարող բավարար համարվել ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու համար: Ավելին, ԽԿԿ զեկույցի սկզբունքները չեն հանդիսանում ամբաստանյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը չեզոքացնելու բավարար հիմնավորում[150]: Միաժամանակ, դատարաններն նշել են, որ զեկույցը չի կարող կիրառելի լինել յուրաքանչյուր դեպքում, այլ կարող է լրացուցիչ հիմք հանդիսանալ անազատության մեջ գտնվող անձի նկատմամբ խափանման միջոցի փոփոխման հարցի քննարկման համար և կարող է հաշվի առնվել անձի պատշաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ այլ հանգամանքների համատեքստում: Որպես նման գնահատման հանգամանքներ որոշ դեպքերում դատարանների կողմից նշվել է, որ «*գործում առկա չեն ամբաստանյալի առողջության վերաբերյալ այնպիսի տվյալներ, որ քրեակատարողական հիմնարկում գտնվելով ամբաստանյալի առողջությանը, առավել ևս՝ կյանքին իրական վտանգ կարող է սպառնալ»*[151]:

[148] ԷԴ/0063/01/19

[149] ԵԴ/0123/01/20

[150] ԵԴ/1053/01/19, ԵԴ/1014/01/19

[151] ԵԴ/1231/01/19; ԵԴ/1129/01/19

Ամփոփում

Հայաստանի Հանրապետությունում նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության համաճարակի պայմաններում կալանավորված անձանց նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանները տարբերվող մոտեցումներ են ցուցաբերել համավարակի և համավարակով պայմանավորված ռիսկային գործոնների առնչությամբ:

Ուսումնասիրված 149 ամբաստանյալների վերաբերյալ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառելու միջնորդություններից 91-ը (61%) մերժվել են, 58-ը (39 %) բավարարվել:

Համավարակի առաջացրած այն ռիսկերը, որոնք հիմք են հանդիսացել կամ նվազագույնը հաշվի են առնվել կալանավորումը այլ խափանման միջոցով փոխարինելու համար, կարելի է բաժանել երկու խմբի, մասնավորապես՝ (1) առողջությամբ կամ տարիքով պայմանավորված՝ անձի խոցելի խմբում գտնվելը և (2) համավարակի արդյունքում դատական նիստերի նշանակման և անցկացման ձգձգումների արդյունքում կալանավորման ժամկետի անորոշությունը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ անգամ այսպիսի հանգամանքների մասին պաշտպանների կողմից պնդումներ ներկայացնելու դեպքում ոչ բոլոր դատարաններն են բավարար գնահատականի և ուսումնասիրության ենթարկել այդ հանգամանքները՝ արդյունքում կալանավորումը թողնելով անփոփոխ, երբ նմանատիպ հանգամանքների և պնդումների պարագայում այլ դատարանի կողմից կալանավորումը փոխարինվել է այլ խափանման միջոցով: Միաժամանակ, արձանագրվել է պաշտպանների կողմից ամեն դեպքում ԽԿԿ զեկույցին հղմամբ համավարակով առաջացած վտանգների վերաբերյալ ընդհանուր պնդումներ ներկայացնելու միտում՝ առանց որոշակի ռիսկերը գործի կոնկրետ հանգամանքների համատեքստում հիմնավորելու:

Անկախ նրանից, որ դատարանները համավարակի ի հայտ գալու և դրա տարածման արդյունքում պետք է կալանավորման իրավաչափությունը գնահատելիս հաշվի առնեն լրացուցիչ գործոնները՝ դա չի վերացնում կալանավորման հիմքերի և պայմանների շարունակական առկայությունը գնահատելու պարտականությունը: Պետք է նշել, որ այս տեսանկյունից դատական ակտերը որոշ դեպքերում խնդրահարույց են այն պատճառով, որ պարունակում էին, օրինակ, միայն ընդհանուր պնդումներ հիմնավոր կասկածի առկայության մասին՝ հղում կատարելով միայն օրենսդրական կարգավորումներին կամ նախկինում կայացված դատական ակտերին և տվյալ դատական ակտում կոնկրետ փաստերի լույսի ներքո վերլուծություն չներառելով: Ավելին, շարունակական կալանավորման հիմքերի հիմնավորումները կրել են ընդհանրական և վերացական բնույթ՝ հիմնական շեշտը դնելով մեղսագրվող հանցագործության ծանրության և հանրային

վտանգավորության վրա և դրանով պայմանավորելով անձի վարքագիծը՝ առանց պատշաճ անդրադառնալու անձի անձնական հատկանիշներին ու այլ հանգամանքներին:

Դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում անգամ դատարանի կողմից համավարակին առնչվող ռիսկային գործոնները հաշվի առնելու և դրանց հիման վրա կալանավորումը գրավով փոխարինելու պայմաններում ի վերջո հնարավոր չի լինում ապահովել կալանավորման վերացումը գրավի՝ պաշտպանի կողմից միջնորդված չափից անհամեմատ ավելի բարձր չափ սահմանելու պատճառով:

Առաջարկություններ

Հաշվի առնելով ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև ՀՀ-ում նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության հերթական ալիքի տարածվածության մասշտաբները՝ առաջարկում ենք.

Վարույթն իրականացնող մարմիններին

- Ապահովել մեղադրյալի նկատմամբ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառումը միայն որպես բացառիկ միջոց,

- Ձեռնպահ մնալ ոչ մեծ ծանրության և բռնչությամբ չզուգորդված հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց նկատմամբ կալանավորման կիրառման միջնորդություններից,

- Առողջական խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և փոխելու միջնորդությունների առնչությամբ ապահովել միատեսակ պրակտիկայի կիրառություն:

Դատարաններին

- Գործել ազատության կանխավարկածով հիվանդության և տարիքի բերումով կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ խոցելիություն ունեցող անձանց, ինչպես նաև ոչ մեծ ծանրության և բռնությամբ չզուգորդված հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց առնչությամբ որոշում կայացնելիս,

- Մեղադրյալի կողմից կոնկրետ հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածը գնահատել և հիմնավորել կոնկրետ փաստերի և տեղեկությունների հիման վրա,

- Բացառել անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի լուծումը՝ հիմնվելով բառացապես անձին մեղսագրվող հանցագործության ծանրության և վտանգավորության վրա,

- Անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելիս ապահովել որոշումների հիմնավորվածության և պատճաբանվածության սկզբունքը,

- Անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելիս ապահովել որոշումների անհատականացվածությունը՝ հիմնվելով անձի անհատական հանգամանքների, այդ թվում՝ առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների գնահատման վրա:

Հավելված: Հետազոտության հարցաշար

1. Գործի համարը, Դատալեքսում հղում
2. Ամբաստանյալի անունը, ազգանունը
3. Ամբաստանյալի սեռը
4. Ամբաստանյալի տարիքը
5. Ամբաստանյալ քաղաքացիությունը:
6. Արդյո՞ք ամբաստանյալն ունի հաշմանդամություն: Նշել մանրամասները:
7. Ամբաստանյալի ընտանեկան կարգավիճակը
8. Արդյո՞ք ամբաստանյալն իր խնամքի տակ ունի անչափահաս երեխա(ներ)
9. Արդյո՞ք ամբաստանյալն ունի առողջական խնդիրներ: Նշել մանրամասները
10. Արդյո՞ք նախկինում դատված է եղել: Եթե այո, ապա ի՞նչ հոդվածով, ե՞րբ:
11. Եթե առկա են ամբաստանյալի կարգավիճակին վերաբերող այլ էական հանգամանքներ, ապա նշել մանրամասները:
12. Քրեական օրենսգրքի համապատասխան հոդված(ներ)ը, որով մեղադրվում է անձը:
13. Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն
14. Արդյո՞ք ամբաստանյալն իրեն մեղավոր ճանաչում է հանցագործության կատարման մեջ"
15. Երբվանի՞ց է անազատության մեջ /նշեք ներկայիս արգելանքի ամսաթիվը:
16. Եթե միակ և անընդմեջ չէ քննարկվող անազատության մեջ պահվելու փաստը, ապա նշել մանրամասները:
17. Ուսումնասիրվող ժամանակահատվածում նույն անձի վերաբերյալ քանի՞ անգամ է խափանման միջոցի կիրառման հարցը քննարկվել առաջին ատյանի դատարանի կողմից՝ մարտի 16-ից մինչև հունիսի 30 ներառյալ:
18. Քանի՞ անգամ է քննարկվել խափանման միջոց կիրառելու հարցը դատարանի կողմից վարույթ ընդունվելուց հետո, ներառյալ ուսումնասիրվող միջնորդությունը՝ հենց դատարանի կողմից վարույթ ընդունելու պահից, անկախ դատավորի փոփոխությունից /Այլ-ում նշեք մանրամասներ, եթե տեղի է ունեցել փոոխություն/
19. Նախաքննության մարմինը
20. Գործը քննող դատարանը
21. Գործը քննող դատավորի անուն, ազգանունը
22. Գործով մեղադրողի անուն, ազգանունը, պաշտոնը:
23. Արդյո՞ք ամբաստանյալն ունի պաշտպան /որը մասնակցել է խափանման միջոցը քննարկելու մասին նիստին
24. Եթե այո, ապա նշեք պաշտպանի անուն, ազգանունը և երբվանից նա ներգրավված, եթե պարզ է: Եթե ոչ, ապա նշեք, թե ինչու՞:
25. Ի՞նչ հիմքով է քննարկվում ամբաստանյալի խափանման միջոցի հարցը
26. Ե՞րբ է կայացվել քննարկվող որոշումը

27. Եթե ներկայացվել է պաշտպանի կողմից միջնորդություն, ապա ե՞րբ :
28. Արդյո՞ք ամբաստանյալը ներկա գտնվել է խափանման միջոցը քննարկելու հարցի դատական քննությանը:
29. Եթե ոչ, ապա ինչու՞:
30. Արդյո՞ք մեղադրողը ներկա է գտնվել խափանման միջոցի քննարկման վերաբերյալ նիստին:
31. Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
32. Խափանման միջոցի վերաբերյալ պաշտպանի դիրքոշումը՝ փոխարինելու հիմքեր, այլ խափանման միջոց ընտրելու կամ ընդհանրապես չընտրելու փաստարկներ, մեղադրողի փաստարկների հակափաստարկները/
33. Արդյո՞ք պաշտպանը հստակ անդրադարձել է COVID-19 պատճառով ամբաստանյալին սպառնացող ռիսկին:
34. Եթե այո, ապա նշեք, թե ի՞նչ ռիսկեր և գործոններ են վկայակոչվել:
35. Եթե վկայակոչվել են հիվանդություններ, ապա նշել բոլոր վերաբերելի պատասխանները:
36. Արդյո՞ք պաշտպանը միջնորդել է կիրառել ազատության հետ չկապված խափանման միջոց կամ ընդհանրապես չկիրառել այն:
37. Եթե այո, կիրառել, ապա մանրամասնեք, թե որո՞նք:.
38. Եթե այո, ապա նշել մնարամասներ, այդ թվում՝ արդյո՞ք պաշտպանն է առաջարկել գրավի չափը, թե՞ թողել է դատարանի հայեցողությանը: Նշել մանրամասները:
39. Ո՞ր փաստաթղթերի/նորմերի/նախադեպերի է հղում արել պաշտպանը միջնորդությունում:
40. Խափանման միջոցի վերաբերյալ մեղադրողի դիրքորոշումը. ի՞նչ հիմքեր, տեղեկություններ, տվյալներ և հիմնավորումներ են ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ մեղադրյալի/ամբաստանյալի նկատմամբ կալանավորումը կիրառելու անհրաժեշտության առնչությամբ, ներառյալ՝ ողջամիտ կասկածը և կալանավորելու հիմքերը /կամ պաշտպանի միջնորդության դեմ առարկելու:
41. Ո՞րն/ո՞րոնք են եղել անձի կալանավորման հիմքերը մեղադրողի դիրքորոշման համաձայն: Ընտրել հիմքերը:
42. Արդյո՞ք մեղադրողը հստակ անդրադարձել է COVID-19 պատճառով ամբաստանյալին սպառնացող ռիսկին:
43. Եթե այո, ապա նշեք, թե ինչ ռիսկեր և գործոններ են վկայակոչվել: Եթե վկայակոչվել են հիվանդություններ, ապա նշել բոլոր վերաբերելի պատասխաններ:
44. Ո՞ր փաստաթղթերի/նորմերի/նախադեպերի է հղում արել մեղադրողը:
45. Արդյո՞ք դատարանի կողմից ուսումնասիրվել է ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցների կիրրառման հարցը:
46. Եթե այո, մանրամասնել, թե որո՞նք:.
47. Արդյո՞ք ընտրել է ազատությունից զրկելու հետ չկապված միջոց:

48. Եթե այո, ապա ո՞րը և ի՞նչ հիմնավորումներով:
49. Եթե անազատության հետ չկապված խափանման միջոց ընտրելը մերժվել է, ապա ի՞նչ հիմնավորմամբ:
50. Արդյո՞ք դատարանն անդրադարձել է հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածին:
51. Ի՞նչ փաստական հանգամանքներ, տեղեկություններ և տվյալներ են դրվել դատարանի որոշման հիմքում՝ որպես անձի կողմից հանցագործությունը կատարած լինելու ողջամիտ կասկածի հիմնավորում:
52. Ո՞րն/ո՞րոնք են եղել անձի կալանավորման հիմքերը դատարանի դիրքորոշման համաձայն։ Ընտրել հիմքերը:
53. Ի՞նչ հիմնավորումներ (բավարար և վերաբերելի) են դրվել դատարանի որոշման հիմքում՝ որպես կալանավորման հիմքերի հիմնավորում:
54. Ամբաստանյալի անձը, բարոյականությունը, արժեքները, կապերը բնութագրող ինչպիսի՞ տվյալներ են հետազոտվել դատարանի կողմից՝ կալավորումը հիմնավորելու առնչությամբ:
55. Ո՞րն է եղել ուսումնասիրվող կալանքի կիրառման ժամկետը:
56. Արդյո՞ք դատարանը հաշվի է առել COVID-19-ով պայմանավորված ռիսկային գործոնները:
57. Եթե այո, ապա նշեք, թե ի՞նչ ռիսկեր և գործոններ են վկայակոչվել: Մանրամասնել:
58. Եթե վկայակոչվել են հիվանդություններ, ապա նշել բոլոր վերաբերելի պատասխանները:
59. Ի՞նչ պատճառաբանություններ են դրվել դատավորի կողմից պաշտպանի/մեղադրողի COVID-ին վերաբերող փաստարկները մերժելու հիմքում:
60. Ո՞ր իրավական փաստաթղթերի/նորմերի/նախադեպերի է հղում արել դատարանը իր որոշման մեջ:
61. Արդյո՞ք փաստական տվյալները հետազոտվել են մրցակցային դատավարության սկզբունքների պահպանմամբ՝ այդ թվում պաշտպանի մասնակցություն, փաստաթղթերի ծանոթանալը, բավարար ժամանակ և այլն:
62. Արդյո՞ք բողոքարկվել է առաջին ատյանի դատարանի որոշումը:
63. Եթե այո, ապա ում կողմից։
64. Եթե հայտնի է, ապա արդյո՞ք վերաքննիչ բողոքը բավարարվել է:
65. Եթե բավարարվել է, ապա նշեք, թե ինչ խափանման միջոց է կիրառվել արդյունքում:
66. Այլ նշումներ